

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ




## Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

### ՄԵԿՆՈՒՄ

**Սույն թվականի ապրիլի 28-ին Վեհափառ Հայրապետը** ձեռնարկեց արտասահման Իր հովվապետական տասներորդ ուղևորությունը:

Սույն ուղևորության ծրագրում նախատեսվում էին Հայոց Հայրապետի այցելությունները **Ռումինիա, Բուլղարիա, Լոնդոն, Փարիզ, Ամման և Երուսաղեմ:**

Ապրիլի 28-ին **Վեհափառ Հայրապետը** Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիկյանի** և Ռումինիայի թեմական խորհրդի սիրալիր հրավերով մեկնեց Ռումինիա՝ հովվապետական այցելության:

Ապրիլի 28-ին, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, Մայր տաճարում Իր աղոթքն անելուց հետո, առաջնորդվեց դեպի Երևանի քաղաքային օդանավակայան՝ մեկնելու համար Մոսկվա:

Այստեղ Հայոց Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի,** Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝** ի գլուխ թեմական խորհրդի ու քահանայից դասի, և հավատացյալներ:

Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը** և տեղակալ **Սուրեն Հովհաննիսյանը**:

Հայրապետական սույն ուղևորության ժամանակ Նորին Սրբությանն ուղեկցում էին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը**, Շիրակի թեմի առաջնորդ **տ. Նարեկ եպս. Շաքարյանը** և Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Վարդան աբղ. Դիլանյանը՝** որպես գավազանակիր:

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդ **տ. Պարգև եպս. Գևորգյանը, տ. Անանիա աբղ. Արաբաջյանը, տ. Նորայր ավ. քհն. Սարգսյանը** և **տ. Կարապետ քհն. Հովնանյանը:**

Հանուն ռուս ուղղափառ եկեղեցու Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքի** և սուրբ Սինոդի, Հայոց Հայրապետին օդանավակայանում ողջունեց և բարի գալուստ մաղթեց Կուրսկի մարզի առաջնորդ և ռուս եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ **տ. Խրիզոստոմ եպիսկոպոսը:**

Հայոց Հայրապետին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ **Իվան Միխեևը:**

Ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքերից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Մոսկվայի «Լենինգրադսկայա» հյուրանոց:

Մայիսի 30-ին, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը Մոսկվայում այցելեց ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի նախագահ **Վ. Կուրոյեդովին:**

Հայոց Հայրապետին ուղեկցում էր տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

**Մայիսի 1-ին, հինգշաբթի օրը, Հայոց Հայրապետը** հովվապետական այցելության մեկնեց Բուխարեստ:

Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին տ. Պարգև եպս. Գևորգյանը, տ. Անանիա աբղ. Արաբաջյանը, Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցու վարչության անդամները և այլ պաշտոնական անձինք:

Դեպի Բուխարեստ Հայոց Հայրապետին ճանապարհեց նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ Իվան Միխեևը:

Երեքժամյա խաղաղ թռիչքից հետո «ՏՈՒ 154» հայրենական ինքնաթիռը վայրէջք կատարեց Բուխարեստի օդանավակայանում:

**Հայոց Հայրապետին** դիմավորելու համար օդանավակայան էին փութացել Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ թեմերի առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը,** քահանայից դասը, թեմական խորհրդի ատենապետ **պրոֆ. Գրիգոր Համբուրճյանը,** փոխ-ատենապետ իրավաբան **Պերճ Կարապետյանը,** առաջնորդարանի դիվանապետ **Վահան Կեմիճյանը,** ռումինահայ թաղական խորհրդի անդամները, մտավորականության ներկայացուցիչներ, «Նոր կյանք» շաբաթաթերթի խմբագիր **Թ. Ծիշմանյանը** և այլ պաշտոնական անձնավորություններ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին նաև, հանուն ռումին օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն **Տ. Ժուստինիան Պատրիարքի** և ս. Սինոդի, պատրիարքական փոխանորդ **տ. Ռոման եպիսկոպոսը, տ. Իոնեսկու և տ. Կեչու ավագ քահանաները:**

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին ռումին պետական իշխանության ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՌՍՀ-ի Մինիստրների սովետին առընթեր դավանությանց բաժանմունքի ներկայացուցիչներ **Է. Մունտիանուն** և **Դ. Ստոյկան:**

Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև Ռումինիայում սովետական դեսպանատան քարտուղար **Վլադիմիր Գուրժիին:**

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին նաև այլ եկեղեցիների և հարանվանությունների ներկայացուցիչներ:

Այնուհետև Հայոց Հայրապետը հանդիսավոր շքերթով առաջնորդվեց Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցի:

Դեպի հայոց եկեղեցի տանող մայթերի վրա, եկեղեցու շրջափակում և տաճարում հավաքված հայ և ռումին հավատացյալների խուռն բազմությունը խանդավառորեն դիմավորեց Հայոց Հայրապետին, մինչ հայրապետական Աջը բարձրանում էր օրհնելու համար ներկա հավատացյալներին:

Առաջնորդանիստ եկեղեցու դռան առաջ Հայոց Հայրապետին մատուցվեցին բարիգալստյան և հյուրասիրության ավանդական աղ ու հացը, որն օրհնեց Նորին Սրբությունը և «Հրաշափառ»-ով հանդիսավորապես մուտք գործեց եկեղեցի:

Տասը տարիներ առաջ Հայոց Հայրապետը նույնպիսի խանդավառությամբ և հուզումով Իր հայրապետական առաջին այցելությունն էր տվել այս պատմական ու պատվական թեմին: Այսօր էլ ներկա հավատացյալները համակված էին խոր հուզումով և երախտագիտությամբ դեպի Հայոց Հայրապետը, դեպի նախկին առաջնորդը ռումինահայ թեմի: Ուրախության, հպարտության և մխիթարության արցունք էր շողում բոլոր ներկաների աչքերի մեջ իբրև պայծառ վկայությունը նրանց սիրո և հավատարմության դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու նրա արժանընտիր ու առաքելաշավիղ Հայրապետը:

Հայտնապես հուզվել էր նաև Ինքը՝ Հայոց Հայրապետը, որ հազիվ կարողանում էր զսպել Իր արտասուքը՝ հիշելով նաև այն երջանիկ օրերը, որ Նա անցկացրել էր Բուխարեստում Իր ուսումնառության, ազգային-կրթական գործունեության և ապա թեմակալ առաջնորդության տարիներին Ռումինիայի այս օրհնյալ և հյուրընկալ հողի վրա: Ամեն բան քաղցր էր և անմոռանալի, թե՛ Հայոց Հայրապետի և թե՛ Ռումինիայում ապրող հայ ժողովրդի զավակների համար: Ի՜նչ շուտ անցան տարիները. կարծես դեռ երեկ լիներ, երբ Բուխարեստում ծնված Լևոն-Կարապետը, երիտասարդ ու խանդավառ, շտապում էր դեպի համալսարան, իսկ այսօր, արդեն մի քիչ ալևորած, որպես Հայրապետ Հայոց, եկել է կրկին անգամ՝ անձամբ բերելու ս. Էջմիածնի օրհնությունը և Հայոց վերածնված աշխարհի ու հայրենաքնակ հայ ժողովրդի ողջույնը:

Եկեղեցական արարողության ավարտին թեմի առաջնորդ **տ. Տիրայր եպիսկոպոսը** բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը՝ Նրա շնորհաբեր երկրորդ այցելության առիթով:

Առաջնորդ սրբազանի բարիգալստյան ջերմ խոսքերից հետո **Հայոց Հայրապետը** հուզմունքից շեշտով Իր ողջույնն ու օրհնությունը բաշխեց թե-



ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՌՈՒՄԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

մակալ առաջնորդին, թեմական խորհրդի պատվարժան անդամներին, ռումինահայ մտավորականությանը, ազգային բոլոր կազմակերպություններին և համայն ռումինահայ ժողովրդին:

Սույն հուզիչ հանդիպումից հետո բոլոր ներկաները աջահամբույրով և երկյուղած բարեպաշտությամբ ստացան Հայոց Հայրապետի օրհնությունը:

Եկեղեցական արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը բարձրացավ առաջնորդարան, ուր տեղի ունեցավ հյուրասիրություն:

Բուխարեստում գտնվելու օրերին Հայոց Հայրապետը բնակվեց Բուխարեստի հայոց առաջնորդարանում՝ որպես թանկագին հյուրը ռումինահայ թեմի:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Մայիսի 3-ին, շաբաթ:** Ս. Հարության տոնի Ճրագալույցի առիթով ս. Հրեշտակապետաց եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

**Մայիսի 4, կիրակի:** Հին տոմարով այսօր Քրիստոսի սուրբ և հրաշափառ Հարության տոնն է:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, օրվա մեծ տոնի առիթով, հայրապետական հանդիսավոր ս. պատարագ է մատուցում **Հայոց Հայրապետը:**

Ժամը 11-ին առաջնորդարանում զգեստավորված Հայոց Հայրապետն առաջնորդվեց եկեղեցի՝ մատուցելու Զատկի ս. պատարագը:

Եկեղեցու շրջափակն ու եկեղեցին ամբողջ լցված էին հավատացյալներով:

Տոնական, հանդիսավոր ու վեհ հնչում էին եկեղեցու զանգերը:

Սկսվեց զատկական պատարագը: Սուրբ սեղանին սպասարկում էին տ. Տիրայր և տ. Նարեկ եպիսկոպոսները, տ. Զարեհ ծ. վարդապետը, տ. Վարդան աբեղան ու քահանայից դասը:

Եկեղեցու աջակողմյան դասում տեղ էին գրավել Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքի ներկայացուցիչ, պատրիարքական փոխանորդ տ. Ռոման եպիսկոպոսը, ռումին հոգևորականներ, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և այլ հոգևոր հայրեր:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Հայոց Հայրապետը՝ բերելով ողջույն և օրհնություն Մայր Աթոռ ս. Էջմիածնից և, այնուհետև, ավետելով ս. Հարության տոնի մեծ խորհուրդը, վեր հանեց Քրիստոսի Հարության խորհրդի պատմական, հոգևոր ու բարոյական նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, խորհուրդ, որի ճշմարտության լույսի տակ ապրեց և ստեղծեց հայ ժողովուրդն իր մշակույթը և, այդ խորհրդի լույսով ոգեշնչված, անցավ իր պատմության քառուղիներից՝ միշտ իր հոգին ջերմացնելով հարության խորհրդի պատգամներով:

Իր քարոզի ժամանակ Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց ներկայությունը տ. Ռոման եպիսկոպոսի և քույր եկեղեցիների ներկա հոգևոր հայրերի, որոնք եկել էին բաժանելու հայ հավատացյալ ժողովրդի հագևոր բերկրանքը և միասին աղոթելու Քրիստոսի Հարության տոնի ուրախ առիթով:

Քարոզի ավարտին Հայոց Հայրապետը երախտագիտական խոր զգացումով օրհնեց Ռումինիայի հյուրընկալ հողը, ուր դարեր շարունակ ու մինչև մեր օրերը բաց ու պայծառ մնացին հայոց աղոթքի տները, մշակութային-

կրթական օջախներն ու ակումբները, և ուր մեր ժողովուրդն ապրեց խաղա-
ղության և բարօրության մեջ՝ վայելելու ռումին բարի ու հավատացյալ ժողո-
վրդի եղբայրական հյուրասիրությունն ու ասպնջականությունը:
Այնուհետև Հայոց Հայրապետը ջերմագին բարեմաղթություն արեց Ռու-
մինիայի Սոցիալիստական Հանրապետության ապահովության, բարօրության



Բուխարեստ. Հայրապետական քարոզ ս. Հրեշտակապետաց եկեղեցում

և ազգային վերածննդյան ճանապարհի վրա Նրա նորանոր հաջողություննե-
րի համար՝ ի փառս ռումին երկրի, բարեմաղթություններ՝ ի պայծառություն
ռումին օրթոդոքս եկեղեցու և ի մխիթարություն ռումին հավատացյալ ժողո-
վրդի:
Հայոց Հայրապետի քարոզից հետո բեմ հրավիրվեց տ. Ռոման եպիսկո-
պոսը, որը, հանուն Նորին Սրբություն Ժուստինիան Պատրիարքի, բարի գա-
լուստ մաղթեց Հայոց Հայրապետին՝ Նրա Բուխարեստ շնորհաբեր այցելու-
թյան առիթով՝ շնորհավորելով նաև բոլորի ս. Հարության տոնը:



ՀԱՅՈՑ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻ. ԲՈՒԽԱՐԵՍՏ

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ս. պատարագից հետո, ժամը 14-ին, թեմական խորհուրդը և ռումինահայ համայնքը, ի պատիվ **Հայոց Հայրապետի**, կազմակերպեց պաշտոնական ընդունելության «Հոթել Մոդեռն» հյուրանոցի դահլիճում:

Ընդունելությանը ներկա էին հայ և ռումին շուրջ 250 հրավիրյալներ, այդ թվում նաև ռումին օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչներ՝ տ. Ռոման եպիսկոպոսի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետը օրհնեց սեղանը, որն այնուհետև վերածվեց ճշմարիտ սիրո սեղանի:

Ճաշկերույթի ժամանակ, խանդավառ ու սրտագին մթնոլորտում, արտասանվեցին ողջույնի և բարիգալստյան բաժակաճառեր **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, տ. Ռոման եպիսկոպոսի և տ. Տիրայր եպիսկոպոսի** կողմից:

Բաժակներ առաջարկվեցին **Հայոց Հայրապետի** արևշատության, Մայր Աթոռ ս. Էջմիածնի պայծառության ու անսասանության, Նորին Սրբություն **Տ. Ժուստինիան Պատրիարքի** կյանքի, ռումին օրթոդոքս եկեղեցու ծաղկման ու բարգավաճման կենաց, ինչպես նաև հայ և ռումին եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության է՛լ ավելի ամրապնդման, խաղաղության պաշտպանության, ազգերի ու ժողովուրդների համագործակցության և եղբայրության ի նպաստ նրանց գործադրած ջանքերի հաջողության համար:

Ընդունելության ժամանակ մասնավոր կարևորությամբ հիշատակվեց և նշվեց ռումինահայ թեմական խորհրդի կատարած եկեղեցանվեր, հայրենասիրական գործունեությունը: **Հայոց Հայրապետն Իր** մասնավոր օրհնության արժանացրեց թեմական խորհրդի համերաշխ, ազգօգուտ աշխատանքները և Իր գոհունակությունը հայտնեց տ. Տիրայր սրբազանին՝ նրան նվիրելով եպիսկոպոսական մի մատանի՝ ի գնահատություն նրա ծառայության և ի նշան հայրապետական Իր սիրո:

Հայոց Հայրապետն Իր ուշադրությանն արժանացրեց նաև Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Զարեհ ծ. վարդապետի** հոգևոր ծառայությունը՝ նրան նվիրելով վարդապետական ձեռաց խաչ:

Վեհափառ Հայրապետն Իր բարձր գնահատանքին արժանացրեց նույնպես ռումինահայ թեմական խորհրդի ծառայությունը՝ ատենապետությամբ **պրոֆ. Գրիգոր Բամբուքճյանի**, ինչպես նաև թաղական խորհրդի եկեղեցանվեր աշխատանքները:

## ՀԱԿՈԲ Ճ. ՍԻՐՈՒՆՈՒ ԿԻՍԱՆԴՐՈՒ ԲԱՑՈՒՄԸ

**Մայիսի 5, երկուշաբթի:** Մեռելոց: Առավոտյան ժամը 9-ին Բուխարեստի հայոց գերեզմանատան մատռան մեջ մատուցվեց ս. պատարագ:

Ժամը 12-ին **Վեհափառ Հայրապետը** առաջնորդվեց Բուխարեստի հայոց գերեզմանատուն, ուր տեղի ունեցավ մասնավոր հոգեհանգիստ՝ հայ մշակույթի անխոնջ երախտավոր, վաստակաշատ պրոֆ. **Հակոբ Ճ. Սիրունու** գերեզմանի վրա: Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը նախագահեց Հակոբ Ճ. Սիրունու հիշատակին կառուցված շիրմի և նրա բրոնզե կիսանդրու բացման հանդիսությանը:

Հանդիսության ընթացքում խոսք առավ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ վեր հանելով Հ. Ճ. Սիրունու կատարած ծառայությունները հայ մշակույթի բնագավառում, ինչպես նաև ռումին երկրին ու մշակույթին մատուցած նրա



Բուխարեստ. Հ. Ճ. Սիրունու գերեզմանի մոտ



Բուխարեստ. Վեհափառ Հայրապետի հանգուցյալ հոր՝ Աբրահամ Պալճյանի գերեզմանի մոտ

ծառայությունները, որոնք արժանացել են ռումին մտավորականության և ժողովրդի անվերապահ գնահատանքին ու երախտագիտությանը:

Այնուհետև բոլոր ներկաների սևեռուն հայացքի տակ իջեցվեց կիսանդրին ծածկող քողը, և ամենքի հիշողության մեջ մի անգամ ևս կենդանացավ բազմահմուտ գիտնականի խոհուն, լուրջ, բարի ու պայծառ կերպարը:

Սիրունու սույն կիսանդրին պատրաստել է հայտնի քանդակագործ օրիորդ **Իռանա Գասպարճյանը:**

Բուխարեստի հայոց գերեզմանատանը թաղված են նաև թեմի նախկին առաջնորդներն ու մտավորականներից շատերը: Այնտեղ է հանգչում Վեհափառ Հայրապետի հանգուցյալ հոր՝ **Աբրահամ Պալճյանի** աճյունը: Այս առիթով Հայոց Հայրապետի հոր գերեզմանի վրա ևս կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՍՀ ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆՑ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**Մայիսի 6-ին, երեքշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, **Հայոց Հայրապետը** քաղաքավարական այցելություն տվեց Բուխարեստում ՌՍՀ Մինիստրների սովետին առընթեր դավանությանց բաժանմունքի ղեկավարությանը:

Այստեղ Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին բաժանմունքի նախագահ **Գեորգե Նենչուն** և **Էուջեն Մունտիանուն:**

Հայոց Հայրապետի և պետական պատասխանատու սույն անձնավորությունների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

Հայոց Հայրապետին այս առթիվ ընկերակցում էին տ. Սերովբե, տ. Տիրայր և տ. Նարեկ սրբազանները:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

**Մայիսի 6-ին,** ժամը 12-ին, **Հայոց Հայրապետը,** ընկերակցությամբ տ. Սերովբե, տ. Տիրայր, տ. Նարեկ սրբազանների, ինչպես նաև ռումինահայ թեմի թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Գրիգոր Համբուրճյանի, պաշտոնական այցելություն տվեց ռումին օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն **Տ. Ժուստինիան Պատրիարքին** ռումին պատրիարքարանում:

Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքը, շրջապատված ս. Սինոդի միտրոպոլիտներով, եպիսկոպոսներով և ռումին բարձրաստիճան հոգևորականներով, ջերմորեն ու եղբայրական սիրով դիմավորեց և բարի գալուստ մաղթեց հայ եկեղեցու գերագույն Պետին և Նրա շքախմբի անդամներին:

Հուզիչ էր և պատմական երկու Հայրապետների եղբայրական ողջագուրումն ի Քրիստոս Հիսուս: Այդ ողջագուրման մեջ մի անգամ ևս նվիրագործվեցին հայ և ռումին եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը, նաև մեր օրերին՝ էկումենիկ շարժման, խաղաղության ու ժողովուրդների համագործակցության պատմական այս ժամանակաշրջանում:

Այնուհետև ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ երկու Հայրապետների և Նրանց շքախմբի անդամների միջև եղբայրական ջերմ զրույց՝ քրիստոնեական եկեղեցին և ժամանակակից աշխարհը հետաքրքրող մի շարք արդիական հարցերի շուրջ:

Սույն հանդիպման ավարտին երկու Հովվապետները փոխանակեցին հուշանվերներ:

Այս առթիվ Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքը և ս. Սինոդը Հայոց Հայրապետի պատվին կազմակերպեցին պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին Հայոց Հայրապետի շքախմբի անդամները, ռումին բարձրաստիճան հոգևորականներ, պետական-հասարակական հայտնի դեմքեր, այդ թվում՝ Կրոնից նախարարության ներկայացուցիչներ Գեորգե Նենչուն, ինչպես նաև դոկտ. Դիմիտրու Դոկարուն: Ընդունելությունն անցավ ջերմ, եղբայրական մթնոլորտում՝ սրտագին բաժակաճառերի փոխանակումով և փոխադարձ բարեմաղթություններով:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մայիսի 7-ին, չորեքշաբթի օրը,** առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը հայոց առաջնորդարանում ընդունեց փոխադարձ այցելությունը ՌՍՀ Մինիստրների սովետին առընթեր դավանությանց բաժանմունքի նախագահ **Գեորգե Նենչուի** և տեղակալ **Էուջեն Մունտեանուի:** Հայոց Հայրապետի և ռումին պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

Նույն օրը, հետմիջօրեին, Հայոց Հայրապետն Իր շքախմբի անդամներով այցելեց ռումինահայ հայտնի նկարիչ և թեմական խորհրդի անդամ **Հրանդ Ավագյանի** նորաբաց տուն-թանգարան:

Մայիսի 8-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Բուխարեստում այցելեց «Կարապետ Ավագյան» և «Գրիգոր Ջամպաքճյան» պատկերասրահթանգարաններ և ապա՝ «Մանուկ Բեյ» իջևանատուն-հյուրանոց, որը ռումին աշխարհիկ ճարտարապետության նմուշներից է:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն Իր օրհնաբեր ներկայությամբ պատվեց թեմական խորհրդի նախկին ատենապետ ծերունազարդ **Վահան Դանիելյանի** ընտանեկան հարկը:

## ԱՅՑ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

**Մայիսի 8-ին,** ժամը 18.30-ին, Բուխարեստի սովետական դեսպանատանը կազմակերպվեց ֆաշիզմի դեմ տարված մեծ հաղթանակի երեսնամյակի կապակցությամբ պաշտոնական նոխ ընդունելություն, որին ներկա եղան ռումին պետական-կառավարական բարձրաստիճան անձնավորություններ, անվանի զինվորականներ, հոգևոր պետեր, ինչպես նաև Ռումինիայում հավատարմագրված դիվանագիտական մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Հրավիրյալների թվում էր նաև Հայոց Հայրապետը՝ Իր շքախմբի անդամներով:

Ընդունելության ժամանակ Ռումինիայում Սովետական Միության լիազոր-դեսպան **Ե. Ի. Դրոզդենկոն,** շրջապատված դեսպանատան պատասխանատու աշխատակիցներով, ողջունեց Հայոց Հայրապետի ժամանումը և բարի գալուստ մաղթեց Նրան:

Նորին Սրբությունը ջերմորեն շնորհավորեց մեծահարգ պարոն դեսպանին մեծ տոնի առիթով:

## ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Մայիսի 10-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 17-ին, Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց առաջնորդանիստ եկեղեցում Հայոց Հայրապետի պատվին, երեկոյան ժամերգությունից հետո, տրվեց հոգևոր համերգ: Ծրագրում տեղ էին գտել հայ և ռումին հոգևոր երաժշտության դասական նմուշներ: Համերգը, որը ղեկավարում էր ս. Հրեշտակապետաց եկեղեցու երգչախմբի խմբավար Կարո Հարությունյանը, անցավ փայլուն հաջողությամբ՝ արժանանալով Հայոց Հայրապետի օրհնությանն ու գնահատանքին:

Համերգից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իր շնորհաբեր ներկայությամբ պատվել ռումինահայ հանրածանոթ երգիչ **Դավիթ Հովհաննիսյանի** ընտանեկան հարկը:

## ՀՐԱԺԵՇՏԻ ՔԱՐՈԶ

**Մայիսի 11: Նոր կիրակի:**

Բուխարեստի ս. Հրեշտակապետաց եկեղեցում պատարագ է մատուցում տ. Նարեկ եպս. Ծաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ **Հայոց Հայրապետն** արտասանում է Իր հրաժեշտի քարոզը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց» բնաբանով: Հայոց Հայրապետը մի անգամ ևս տալով հրաշափառ սուրբ Հարության շնորհաբաշխ ավետիսը որպես նոր կյանքի և նոր տարվա պատգամ, կանգ առավ Նոր կիրակիի հոգևոր նշանակության վրա հատկապես մեր ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունն Իր քարոզի մեջ շեշտեց, որ մեր ժողովրդի քրիստոնեական մտածողության մեջ Քրիստոսի Հարությամբ է սկսվում նոր կյանքը, ինչպես նաև քրիստոնյա ժողովուրդների կյանքի պատմության մեջ որպես վերանորոգման, առաջադիմության, մարդու բարոյական կատարելագործման մի նոր ալիքը: Հայոց Հայրապետն Իր քարոզում մեր պատմության փորձով հաստատեց, որ հայ ժողովուրդն առաջիններից մեկը եղավ, որը բացեց իր հոգին Քրիստոսի Հարության լույսին և այդ լույսի միջով անցավ իր պատմության փշոտ ճանապարհներից՝ հասնելու համար այսօրվա պայծառ իրականությանը: Հայոց Հայրապետը շեշտեց նաև, որ ռումին բարեպաշտ ժողովուրդը ևս եղել է Քրիստոսի Հարության ճշմարտությունը դավանող ժողովուրդներից մեկը իր ողջ պատմության ընթացքում:

Նորին Սրբությունն Իր քարոզի ավարտին սրտաբուխ բարեմաղթություններ արեց հայ և ռումին քույր եկեղեցիների ու ժողովուրդների բարօրության և երջանկության համար՝ շեշտելով, որ այս օրհնյալ երկրում ապրող հայ ժողովրդի զավակները միշտ հավատարիմ և երախտապարտ պիտի մնան ռումին ասպնջական երկրին և նրա բարեխնամ կառավարությանը:

Ս. Պատարագից հետո ռումինահայ թեմական խորհրդի ատենապետ պրոֆ. **Գրիգոր Բամպուքճյանը** ուրախությունն ունեցավ իր ընտանեկան հարկի տակ ընդունելու ներկայությունը Հայոց Հայրապետի, հյուրընկալության սեղանի շուրջ:

Նույն օրը, երեկոյան, առաջնորդարանի ընդունելությանց դահլիճում Հայոց Հայրապետի նախագահության ներքո տեղի ունեցավ ռումինահայ հանրածանոթ նկարիչ **Հրանդ Ավագյանի** ծննդյան 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն: Այս առթիվ ընթերցվեց Հայոց Հայրապետի օրհնության կոնդակը՝ ուղղված վաստակավոր հոբելյարին, որին ջերմորեն շնորհավորեցին նաև ներկաներից շատերը:

Այնուհետև գնահատանքի և օրհնության խոսք ասաց Հայոց Հայրապետը՝ վեր հանելով տաղանդավոր արվեստագետի շնորհակալ ծառայությունը հայ և ռումին նկարչական արվեստի զարգացման գործին։

Հանդիսության ավարտին Հայոց Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության հետևյալ ջերմ խոսքով հանդես եկավ հարգելի հոբելյարը։



Բուխարեստ. Հայոց Հայրապետը շնորհավորում է ռումինահայ նկարիչ Հրանդ Ավագյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ

«Վեհափառ Տեր,

Պատանեկությունս պղտորող հալածանքները, դժբախտությունները և հետո հուսախաբությունները ու հաջողությունները ետևս թողած, հասա տարիներու այն հանգրվանին, ուրկե կարելի է հստակորեն դիտել, վերլուծել կյանքի մը համայնապատկերը։ Այսօր համոզված եմ, թե սնանկ չպիտի բաժանվիմ այս աշխարհեն. վկա՝ Ձեր բարի սերը ինձի հանդեպ և Ձեր ներկայությունը, մեզ բոլորիս սիրելի Ամենայն Հայոց մեծ Հայրապետ։

Արվեստագետ մը որ իր առաջացած տարիքին իր աչքերով կտեսնէ այն, որ իզուր չեն անցած ջանքերն ու աշխատանքը ի սպաս դրված գեղեցիկին ու բարիին, պետք է ինքզինքը երջանիկ համարե։

Գիտակից այն ժառանգության, որ պիտի թողում իմ մեկնումի ժամուս, այսօր գիտեմ նաև, թե ինչ պիտի տանիմ հետս. Ձեր սերն ու պատիվը ինձ հանդեպ ու հարգանքն իմ արվեստին։



Բուխարեստ. Հայոց Հայրապետը, շրջապատված թեմական և թաղական խորհուրդների անդամներով, հայոց առաջնորդարանի առջև

Խորին շնորհակալությունս, Վեհափառ Տեր, որ պատվեցիք զիս՝ նախագահելով իմ ծննդյանս 75-րդ տարեդարձին։ Շնորհակալություն ձեզ նաև, սրբազան հայրեր, շնորհակալություն, հարգելի ներկաներ ու բարեկամներ, որ ձեր ներկայությամբ հարգեցիք իր ժողովրդին նվիրված արվեստագետ մը՝ նոր գոհունակություններ, խրախուսիչ ուրախություններ պատճառելով անոր մաշած, բայց երջանիկ օրերուն»։

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մայիսի 12—14 օրերին** Հայոց Հայրապետը ուխտագնացության մեկնեց Ռումինիայի մի շարք պատմական վանքեր, այդ թվում՝ Սինայայի հռչակավոր պատմական վանք, որը գտնվում է Բուխարեստից շուրջ 120 կմ հեռավորության վրա։

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Իր շքախմբի անդամները, ինչպես նաև Տ. Ժուստինիան Պատրիարքի կողմից պատրիարքական փոխանորդ տ. Ռոման եպիսկոպոսը:

Այնուհետև Հայոց Հայրապետը եղավ Ցիգանեշտի (ԺԷ դար) և Գիգիուի (ԺԹ դար) վանքերում, որտեղ Նա եկեղեցական արարողություններով և մեծ հարգանքով դիմավորվեց վանական միաբանության անդամների ու բազմաթիվ հավատացյալների կողմից: Հայոց Հայրապետն օրհնեց միաբանության անդամներին, այցելեց վանքերի թանգարանները ու այլ տեսարժան վայրեր, արդյունաբերական արհեստանոց-ֆաբրիկաներ և հանգամանորեն ծանոթացավ վերոհիշյալ վանքերի վանական-միաբանական կյանքին:



Ռումինահայ նկարիչ Հրանդ Ավագյան

Վեհափառ Հայրապետը Սինայայի վանքում երկու օր հյուրասիրվելուց հետո վերադարձավ Բուխարեստ՝ ճանապարհին այցելելով Քեյա և Սուզանա վանքեր (ԺԸ դար), ինչպես նաև Բրաշով քաղաքի ս. Նիկոլայ եկեղեցի, որը կոչվում է նաև «Սև եկեղեցի» (ԺԷ դար)՝ հրկիզված լինելով թուրքերի կողմից:

## ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

**Մայիսի 15-ին, հինգշաբթի օրը,** ժամը 14-ին, ռումինահայ թեմական խորհուրդը, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, «Հոթել Մոդեռն» հյուրանոցի դահլիճում կազմակերպեց հրաժեշտի ընդունելություն, որին ներկա եղան ավելի քան 150 հայ և ռումինացի պաշտոնական անձնավորություններ, այդ թվում և ՌՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական դավանության բաժանմունքի նախագահ Գեորգե Նենչուն:

**Հայոց Հայրապետի** և Նորին Սրբություն **Ժուստինիան Պատրիարքի** մուտքն ընդունելության սրահ ողջունվեց հոտնկայս և սրտագին ծափահարություններով:

Հրաժեշտի սույն ընդունելությանը հրավիրված էին Բուխարեստի կրոնական բոլոր համայնքների պետերն ու ներկայացուցիչները:

Սեղանների շուրջ ստեղծվեց ջերմ, սրտագին մթնոլորտ:

Հայոց Հայրապետին ուղղյալ ողջերթի բարեմաղթություններով հանդես եկան **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը,** հռոմեական կաթոլիկ եկեղեցու առաջնորդ **տ. Ֆրանչիսկ Ավգուստին արքեպիսկոպոսը,** մահմեդական համայնքի **մուֆթին,** հրեական համայնքի պետ **Մոիզ Ռոզենը** և այլ հարանվանությունների ներկայացուցիչներ:



Բուխարեստ. Հրաժեշտի պաշտոնական ճաշկերույթ

ՌՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական դավանությանց բաժանմունքի անունից **Գեորգե Նենչուն** բարի ճանապարհ մաղթեց Հայոց Հայրապետին՝ նշելով միաժամանակ, որ Նորին Սրբությունը էկումենիկ շարժման և խաղաղության պաշտպանության կորովի ջատագովներից և գործիչներից է մեր ժամանակաշրջանում:

Առանձնապես հուզիչ և ջերմ էր Նորին Սրբություն **Ժուստինիան Պատրիարքի** ողջերթի խոսքը: Նորին Սրբությունը հատուկ ոգևորությամբ խոսեց հայ և ռումին եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, վեր հանեց էկումենիկ եղբայրության կարևորությունը մեր օրերին քրիստոնեական եկեղեցիների կյանքում՝ ընդգծելով Հայոց Հայրապետի կարևոր ավանդն այդ գործում Իր գահակալության քսան տարիների ընթացքում:

Նույնպես ջերմ ու սրտառուչ էր **Հայոց Հայրապետի** ռումիներեն լեզվով արտասանած շնորհակալական և երախտագիտական խոսքը՝ ուղղված բոլոր ներկաներին, որոնք եկել էին բաժանելու ռումինահայ համայնքի ուրախությունը Հայոց Հայրապետի այցելության առիթով: Նորին Սրբությունը մի անգամ ևս Իր զգացված սրտագին շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքին, սրբազան Սինոդի անդամներին,

ռումին բարձրաստիճան հոգևորականությանը, պետական իշխանության ներկայացուցիչներին, որոնք բոլոր պայմանները ստեղծել էին, որպեսզի Հայոց Հայրապետի Ռումինիա կատարած երկրորդ այցելությունը լինի արդյունավետ և բարեհաջող:

Հայոց Հայրապետն Իր մասնավոր գոհունակությունն ու ուրախությունը հայտնեց նաև առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանին, թեմական խորհրդի հայտնեց նաև առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանին, թեմական խորհրդի հիմնադրման անդամներին՝ հրաժեշտի այս ընդունելությունը կազմակերպելու համար, ընդունելություն, որը վկայությունն էր ռումինահայ թեմի, ազգային-եկեղեցական մարմինների որդիական սիրո և երախտագիտության՝ դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու նրա գահակալը:

Հրաժեշտի սույն ընդունելությունն ավարտվեց խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

**Մայիսի 15-ին, հինգշաբթի օրը**, ավելի ուշ, Հայոց Հայրապետը բարեհաճեց ընդունել Բուխարեստում լույս տեսնող «Նոր կյանք» շաբաթաթերթի թղթակցին և, պատասխանելով նրա մի շարք հարցերին, արեց հետևյալ հայտարարությունը.

«Մեր օրերում ապրող ամեն գիտակից մարդու նվիրական իղձն է պահպանումը և ամրապնդումը ժողովուրդներու և պետություններու միջև խաղաղ և արդար հարաբերությանց: Առավել ևս, հանրային կյանքի մեջ պատասխանատվություն ունեցող անձանց և կազմակերպությանց պարտականությունն է այդ:

Հայաստանյայց եկեղեցին ևս, իր քույր եկեղեցիներու կողքին, իր սրբազան առաքելությունը կնկատե նպաստել աշխարհի խաղաղության ամրապնդման:

Երև առաջին սպասավորը հայ եկեղեցվո, վերջին քսան տարիներու ընթացքին գործոն կերպով մասնակցած ենք խաղաղության համաշխարհային շարժման բոլոր համագումարներուն, ամեն անգամ թարգմանը հանդիսանալով հայ ժողովուրդի խաղաղասիրական զգացումներուն:

Մայր Աթոռս գործոն կերպով կմասնակցի նաև քրիստոնեական եկեղեցիներու խաղաղության շարժման (Պրագայի կեդրոնի) աշխատանքներուն:

Այս տարի փետրվարին այդ շարժման Միջազգային քարտուղարությունը իր հերթական նստաշրջանը գումարեց ս. Էջմիածնի մեջ, որուն մասնակցեցան ներկայացուցիչներ 14 տարբեր երկիրներու:

Մենք խորապես մխիթարված ենք այն իրողությամբ, որ խաղաղության շարժումը հետզհետե կզորանա և կտարածվի, դառնալով բոլոր ժողովրդական զանգվածներու ամենահարազատ շարժումը:

Այլևս կարելի չի հաշտվիլ պատերազմի գաղափարին հետ: Այլևս կարելի չէ հանդուրժել պատերազմ սնուցանող գործոններու գոյացումը կամ գոյատևումը միջազգային կյանքի մեջ:

Ամեն ժողովուրդ իր ապահովությունն ու երջանկությունը հետ այսու կարող է գտնել միմիայն խաղաղ գոյակցության և բարեկամական գործակցության ճամփով:

Քսան տարիներու մեջ Մեր հայրապետական գործունեության ընթացքին Մեր սեպուհ պարտքը նկատեցինք վերաշինությունը մեր եկեղեցական պատմական հուշարձաններուն, որոնք բարձրարժեք կոթողները կհանդիսանան դասական հայ ճարտարապետության, սկսյալ Դ դարեն մինչև ԺԷ դարերը:

Մայր Աթոռիս միջոցներով ցարդ հիմնովին վերանորոգվեցան ավելի քան տասնյակ մը նման եկեղեցական հուշարձաններ, ինչպես՝ ս. Էջմիածնի Մայր տաճարը, ս. Հռիփսիմեն, ս. Գայանեն, ս. Շողակաթը, ս. Գեղարդը, Օշականի ս. Մեսրոպ եկեղեցին, Խորվիրապը, Բջնիի եկեղեցին, Երևանի ս. Սարգիս եկեղեցին և ուրիշներ:

Այս տարի պիտի սկսին վերանորոգության աշխատանքները Ապարանի եկեղեցիին, որ Դ. դարու բազիլիկ հուշարձան մըն է:

Մայր Աթոռի մեջ հավաքած ենք նաև հին հայ սրբանկարներ, եկեղեցական արվեստի գործեր և հին դրամներ: Պատկառելի թիվ մը կկազմեն անոնք: Մասամբ ցուցադրված են Մայր տաճարի, Հին Վեհարանի և Նոր Վեհարանի սրահներուն մեջ: Մտադիր ենք Մայր Աթոռի մեջ նոր շենք մը կառուցանել որ ծառայե իբրև թանգարան, վերոհիշյալ արվեստի գործերը այնտեղ ցուցադրելու համար գիտական հիմունքներու վրա:

Մայր Աթոռի շրջանակին մեջ հավաքած ենք նաև շուրջ քառասուն հին խաչքարեր տարբեր շրջաններե, որոնք կկազմեն հավաքածո մը հայ խաչքարերու քանդակագործության արվեստի:

Ինչպես ծանոթ է բոլորին, Մայր Աթոռս վերջին տարիներուն հրատարակեց երկու գեղարվեստական ալբոմներ, մեկը նվիրված հայ դասական ճարտարապետության՝ «Հայկական եկեղեցիներ» անունով, երկրորդը՝ նվիրված մեր միջնադարյան խաչքարերու արվեստին՝ «Հայկական խաչքարեր» անունով:

Ծրագրած ենք երրորդ ալբոմ մը ևս հրատարակել՝ նվիրված Մայր Աթոռիս հայկական հին սրբանկարներու, ասեղնագործության և մանրանկարչության արվեստին:

Ռումանիայեն Հայաստան կվերադառնանք պարզապես սքանչացած: Թե՛ մայրաքաղաքը և թե՛ այն շրջանները ուր այցելեցինք, հիացում պատճառեցին Մեզի: Ամեն կողմ կառուցում և վերակառուցում, և մշակութային աննախընթաց ծաղկում: Նոր Ռումանիա ճշմարտապես իրականացած երազն է ռումեն ժողովուրդի զավակներուն: Ով որ ուզե արդար համեմատություն մը կատարել նախապատերազմյան և այժմյան Ռումանիո միջև, կարող է հաստատել ու հասկնալ թե ինչ հրաշքներ կրնա գործել աշխատասեր ու տաղանդավոր ազգ մը, ժողովրդանվեր կառավարության մը առաջնորդության ներքո, ազգային ինքնիշխան ղեկավարությամբ:

Ուրախությամբ կողջունենք «Նոր կյանք»-ի 25-ամյակը: Սրտանց կգնահատենք ձեր տարած աշխատանքը և կմաղթենք որ հետզհետե առավել նպատակասլացությամբ ձեր թերթը շարունակե իր առաքելությունը ռումանահայ և սփյուռքահայ կյանքին մեջ:

Այս առթիվ ձեր բոլոր ընթերցողներուն կբերենք Մեր հայրական սիրո ողջույնը և օրհնությունը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն»:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ

**Մայիսի 16-ին, ուրբաթ օրը,** Ռումինիայում Հայոց Հայրապետի այցելության վերջին օրն է:

Ժամը 16-ին Հայոց Հայրապետն Իր շքախմբով հանդիսավորապես մեկնեց Բուխարեստի միջազգային օդանավակայան:

**Հայոց Հայրապետին** ճանապարհելու համար անձամբ այնտեղ էր ժամանել Նորին Սրբություն **Ժուստինիան Պատրիարքը**՝ շրջապատված տ. Անտոնի և տ. Ռոման եպիսկոպոսներով և ռումին հոգևորականների մի մեծ խմբով:

Հայոց Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել նաև ռումինահայ թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների բոլոր անդամները, ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսի:

Հայոց Հայրապետին ողջերթ մաղթելու էր եկել նաև Ռումինիայում բուլղար օրթոդոքս եկեղեցու համայնքը՝ հոգևորականներով և պաշտոնական անձնավորություններով:



Բուխարեստ. Օդանավակայանի պաշտոնական սպասասրահում են Հայոց Հայրապետը, Տ. Ժուստինիան Պատրիարքը, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և դավանության նախագահ Գեորգե Նենչուն

Հայոց Հայրապետն այցելության էր մեկնելու դեպի Բուլղարիա՝ եղբայրական սիրալիր հրավերով բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն **Մաքսիմ Պատրիարքի** և **սրբազան Սինոդի:**

Բուխարեստի օդանավակայանում **Հայոց Հայրապետին** դեպի Բուլղարիա ճանապարհում էր Ռումինիայում Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության դեսպան **Տրայկու Յորդանովը:**

Ռումինիայում Սովետական Միության դեսպան **Ե. Ի. Դրոզդենկոյի** անունից Հայոց Հայրապետին ճանապարհելու էր եկել նույնպես դեսպանության քարտուղար **Վլադիմիր Գուրժիին:**

Հանուն ՌՍ Հանրապետության Հայոց Հայրապետին ողջերթ մաղթելու էին եկել նաև ՌՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական դավանության բաժանմունքի նախագահ **Գեորգե Նենչուն** և տեղակալ **Էուջեն Մունտիանուն:**

Մեկնումի վերջին պահն է: Երկու Հովվապետները՝ **Հայոց Հայրապետը** և **Տ. Ժուստինիան Պատրիարքը,** ողջագուրվեցին եղբայրական անկեղծ սիրով՝ միմյանց վերստին հանդիպելու քաղցր իղձով:

Քիչ հետո ինքնաթիռը բարձրացավ դեպի եթեր և ուղղություն վերցրեց

դեպի Սոֆիա, բոլոր ներկաների սրտագին բարեմաղթությունների և ջերմ ծափողջույնների տարափի ներքո:

**Մայիսի 1—16 օրերին Հայոց Հայրապետի** բարեկամական այցելությունը Ռումինիա հանդիսացավ մի նոր և կարևոր նպաստ քրիստոնեական եկեղեցիների կյանքում մեր ժամանակաշրջանը հատկանշող էկումենիկ շարժման ծավալման, ինչպես նաև հայ և ռումին ժողովուրդների և մշակույթների փոխադարձ ծանոթացման ու գնահատման և երկու երկրների՝ Ռումինիայի և Սովետական Հայաստանի ավանդական կապերի սերտացման գործում:



Բուխարեստ. Հրաժեշտ Ռումինիային

Հովվապետական սույն այցելությունը թանկագին մի առիթ հանդիսացավ նաև ռումինահայ թեմի և ժողովրդի եկեղեցասիրական և հայրենասիրական զգացմունքների վերարծարծման, որով ռումինահայ համայնքը պատեհություն ունեցավ մի անգամ ևս զգալու, որ ինքը անբաժան ու հարազատ մի մասն է, ս. Էջմիածնի օրհնության ներքո, հայ ժողովրդի ամբողջական մարմնի՝ վերածնված Հայոց աշխարհի ջերմացնող շնչի տակ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

### ԺԱՄԱՆՈՒՄ

**Մայիսի 16-ին, ուրբաթ օրը, Հայոց Հայրապետը,** բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն **Մաքսիմ Պատրիարքի** և **սրբազան Սինոդի** եղբայրական սիրալիր հրավերով, երկրորդ անգամ լինելով, պաշտոնական այցով ժամանեց Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Սոֆիա: Ծուրջ մեկժամյա թռիչքից հետո, երեկոյան ժամը 17-ին, ինքնաթիռը վայրէջք կատարեց:

Մայրաքաղաքի միջազգային օդանավակայանում հավաքված բազմաթիվ բուլղարներ ու հայեր ջերմորեն դիմավորեցին Հայոց Հայրապետին:

**Նորին Սրբությանը** ողջունելու և բարի գալուստ մաղթելու համար անձամբ օդանավակայան էր ժամանել Նորին Սրբություն **Տ. Մաքսիմ Պատրիարքը՝** շրջապատված ս. Սինոդի անդամներով՝ միտրոպոլիտներով, եպիսկոպոսներով և բարձրաստիճան այլ հոգևորականներով, որոնց թվում՝ Դոստոլոչերվինսկիի միտրոպոլիտ **տ. Սոֆրոնին,** Պլովդիվի միտրոպոլիտ **տ. Վառլաամը,** Ստարա Զագորայի միտրոպոլիտ **տ. Պանկրատին,** Լովեչի միտրոպոլիտ **տ. Գրիգորին,** ս. Սինոդի գլխավոր քարտուղար **տ. Դոմետիան եպիսկոպոսը,** հոգևոր ճեմարանի ռեկտոր **տ. Իոան եպիսկոպոսը,** Սմոլնիի **տ. Տիխոն եպիսկոպոսը,** Պրովատիայի **տ. Անտոնի եպիսկոպոսը,** հոգևոր ճեմարանի պրոֆեսորներ և այլ անձնավորություններ:

Օդանավակայանում **Հայոց Հայրապետի** ժամանումը ողջունեցին նաև բուլղարահայ թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամները՝ բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ **Օնիկ Ասլանյանի** գլխավորությամբ, ինչպես նաև Սոֆիայի հայոց ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ քհն. Բենլյանը** և Սոֆիայի եկեղեցական վարչության ատենապետ Օնիկ Քյուրտյանը:

Հայրապետական սույն այցելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին **տ. Սերովբե, տ. Տիրայր, տ. Նարեկ** սրբազանները և **տ. Դավիթ աբղ. Դիլանյանը՝** որպես գավազանակիր:

Սոֆիայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրությանն առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ **Ստոյան Բարըմովը,** ինչպես նաև Սոֆիայում սովետական դեսպանության հյուպատոս **Ա. Մ. Ելիսեևը:**

Հայոց Հայրապետի շնորհաբեր ժամանումը ողջունեցին նաև բուլղարահայ ազգային-եկեղեցական մարմինների, հասարակական-մշակութային կազմակերպությունների, մամուլի ներկայացուցիչներ:

Հուզիչ էր պահը և պատմական, երբ հայ և բուլղար եկեղեցիների Հովվապետները՝ **Հայոց Հայրապետը** և **Բուլղարիայի Պատրիարքը,** հին և մտերիմ բարեկամներ, ժողովրդի բազմության խանդավառ արտահայտությունների և ծափերի ներքո, ողջագուրվեցին «ի համբոյր սրբութեան» և սիրո բուլղարական հյուրընկալ հողի վրա:

Բուլղարահայ համայնքի անունից արծաթե ափսեի մեջ Հայոց Հայրապետին մատուցվեց ավանդական հայկական աղն ու հացը:

Այնուհետև երկու Հովվապետներն իրենց շքախմբերով առաջնորդվեցին օդանավակայանի պաշտոնական ընդունելության սրահ, ուր փոխանակեցին ողջույնի և բարիգալստյան սրտառուչ խոսքեր:

## Ս. ՍԻՆՈԴԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՏՌԱՆ ՄԵՋ

Փոքր դադարից հետո **Հայոց Հայրապետը** և **Մաքսիմ Պատրիարքն** ավտոմեքենաների ուղեկցությամբ, հանդիսավոր շքերթով առաջնորդվեցին Սոֆիայում ս. Սինոդի պալատի մատուռ, ուր տեղի ունեցավ էկումենիկ աղոթք:

Եկեղեցական արարողության ավարտին երկու Հայրապետները մի անգամ ևս փոխանակեցին բարիգալստյան և ողջույնի խոսքեր: Մատուռը և շրջափակը լցված էր հայ և բուլղար հավատացյալների բազմությամբ:

Ս. Սինոդի սույն ընդունելությունն ավարտվեց Հայոց Հայրապետի պատվին տրված հոգևոր համերգով, հայ և բուլղար եկեղեցիների պայծառության,



Ս. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵՎՍԿԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ. ՍՈՖԻԱ

հայ և բուլղար ժողովուրդների բարօրության և աշխարհի խաղաղության համար կատարված մաղթանքներով:

Այնուհետև Հայոց Հայրապետն Իր շքախմբի անդամներով առաջնորդվեց մայրաքաղաքի «Գրանդ հոթել Սոֆիա» հյուրանոց, ուր մնաց Սոֆիայում Իր կեցության բոլոր օրերին՝ որպես թանկագին հյուրը բուլղար օրթոդոքս եկեղեցու, նրա Սրբազան Պարիարքի և ս. Սինոդի:



Սոֆիա. Հայոց Հայրապետը և Տ. Մաքսիմ Պատրիարքը ս. Սինոդի սրահում

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ԶՐՈՒՅՑ ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ

**Մայիսի 17-ին, շաբաթ օրը,** առավոտյան ժամը 10-ին, Նորին Սրբություն **Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքն** Իր շքախմբի անդամներով բարիգալստյան պաշտոնական այցելություն տվեց **Հայոց Հայրապետին** «Գրանդ հոթել Սոֆիա» հյուրանոցում: Երկու Հովվապետների և Նրանց շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ ջերմ, սիրալիր զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը, ի պատիվ Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքի և Նրա շքախմբի անդամների, տվեց ճաշկերույթ, ուր կրկին անգամ փոխանակվեցին բարիգալստյան և ողջույնի ջերմագին խոսքեր:

Հայոց Հայրապետն առաջին իսկ առիթով Իր և շքախմբի անդամների անունից եղբայրական սրտագին շնորհակալություն հայտնեց Բուլղարիա Իր երկրորդ այցելության հրավերի համար:

## ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

**Մայիսի 17-ին,** նույն օրը, ժամը 11.30-ին, **Հայոց Հայրապետը** և **Բուլղարիայի Սրբազան Պատրիարքը,** Իրենց շքախմբի անդամների ուղեկցությամբ, այցելեցին Սոֆիայում Բուլղարիայի ազատագրության համար իրենց

կյանքը զոհած սովետական մարտիկների հուշարձան: Այս առթիվ Հայոց Հայրապետը, հանդիսավոր իրադրության մեջ, հուշարձանին դրեց գեղեցիկ մի ծաղկեպսակ՝ հետևյալ մակագրությամբ. «Սովետական ռազմիկներին, ովքեր ընկան Բուլղարիայի ազատագրության համար. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինից»:

Ծաղկեպսակի զետեղման սույն արարողությանը ներկա էին բուլղարահայ թեմի թեմական խորհրդի և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամները, ինչպես նաև հայ հավատացյալ ժողովրդի մի մեծ բազմություն:

Սույն հանդիսությանը ներկա էին նաև Սովետական Միության հյուպատոս **Ա. Մ. Ելիսեևը**, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրությանն առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ **Ստոյան Բարըմովը** և այլ պաշտոնական անձնավորություններ:

Այնուհետև երկու Հայրապետները այցելեցին հուշարձանի մոտակայքում գտնվող «Ազատության այգի», ուր տարածվում է եղբայրական գերեզմանատունը, և հոգեհանգստյան աղոթքով ոգեկոչեցին ազատասեր զոհերի հիշատակը:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Մայիսի 17-ին,** երեկոյան, **Վեհափառ Հայրապետն** այցելեց Սոֆիայի հայոց ս. Աստվածածին եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով և նախագահեց Հոգեգալստյան տոնի նախատոնակի արարողությանը:

Եկեղեցին և շրջափակը լցված էր հավատացյալների խուռներամ բազմությամբ, որը ջերմորեն և խանդավառությամբ ողջունեց Հայոց Հայրապետի օրհնաբեր ժամանումը:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին բուլղար օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

Եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ քհն. Բենլյանը** ջերմ ուղերձով ողջունեց Հայոց Հայրապետի ժամանումը հանուն Սոֆիայի հայության և ազգային-եկեղեցական մարմինների՝ նշելով, որ Սոֆիայի հայությունն ապրում է ազգային հպարտության և հոգևոր ուրախության ու մխիթարության անմոռանալի պահեր, որովհետև Հայոց Հայրապետը ոչ միայն պաշտոնական ու թանկագին հյուրն է բուլղար օրթոդոքս եկեղեցու և ս. Սինոդի, այլ նաև ողջ բուլղարահայության, որ անհամբեր սպասում էր այս երջանիկ այցելությանը:

Ժամերգության ավարտին Հայոց Հայրապետին, բուլղարահայ ողջ թեմի անունից, ջերմորեն ողջունեց և բարի գալուստ մաղթեց առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը**՝ խնդրելով Նորին Սրբության օրհնությունը:

Հայոց Հայրապետը, խոսք առնելով, Իր հայրական ողջույնն ու օրհնությունը հաղորդեց Բուլղարիայի հյուրընկալ հողի վրա ապրող Իր հավատացյալ զավակներին՝ տալով նրանց հայրապետական Իր պատգամը՝ ամուր և անսասան մնալու իրենց քրիստոնեական հավատի և հայրենի սրբազան ավանդությունների վեմի վրա, վառ պահելու իրենց հայկական հոգին, մեսրոպյան քաղցր լեզուն, հայրենաբաղձ զգացումները՝ լինելով միաժամանակ հավատարիմ, շինարար և ազնիվ քաղաքացիները բուլղարական հայրենիքի:

Այնուհետև Հայոց Հայրապետն Իր գոհունակությունն ու ջերմ երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքին, Նրա եղ-



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԶԵՏԵՂԵԼՈՒՑ ՀԵՏՈ. ՍՈՖԻԱ

բայրական հրավերի և այն հարգալից ուշադրության ու սիրո համար, որ ցուցաբերվեց Իր նկատմամբ Բուլղարիայում գտնվելու առաջին իսկ օրից:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը ջերմ ու սրտագին բարեմաղթություններ արեց բուլղարահայ հայրենասեր համայնքին, նրա թեմական և եկեղեցական կազմակերպություններին՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդի, բարձր գնահատելով նրանց բարի եռանդն ու անձնվեր ջանքերը և հետագա հաջողություններ ցանկանալով նրանց եկեղեցանվեր աշխատանքներին:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ «ԵՐԵՎԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

**Մայիսի 17-ին, շաբաթ օրը,** երեկոյան, **Հայոց Հայրապետն** այցելություն տվեց Սոֆիայում հայ մշակութային կազմակերպության «Երևան» կենտրոն, ուր Նրան և Նրան ընկերակցող հյուրերին ողջունեց և բարի գալուստ մաղթեց վարչության նախագահ Գաբրիել Գաբրիելովը:

Ընդունելությանը ներկա էին նաև թեմական խորհրդի, եկեղեցական վարչության անդամները, Սոֆիայի հայոց քահանայից դասը, «Երևան» թերթի խմբագիր Հայկ Օրմանճյանը և այլ պաշտոնական անձնավորություններ:

Սոֆիայի եկեղեցական վարչության ատենապետ Օնիկ Քյուրտյանը, հանուն Սոֆիայի եկեղեցական վարչության, հոգևորականության, «Զվարթնոց» երգչախմբի անդամների և ողջ սոֆիահայության, ջերմապես ողջունեց Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունեց նաև ընդունելությանը ներկա միտրոպոլիտ Բանկրատին՝ նշելով Հայոց Հայրապետի արդյունավետ գործունեությունը էկումենիկ շարժման և խաղաղության պաշտպանության բնագավառներում:

Իր պատասխան խոսքում Հայոց Հայրապետն Իր օրհնությանը և գնահատանքին արժանացրեց «Երևան» մշակութային կազմակերպության հայրենանվեր ծառայությունը: Նորին Սրբությունը մի անգամ ևս ամենայն կարևորությամբ շեշտեց հայ և բուլղար եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամությունը՝ մաղթելով, որ եղբայրական սիրալիր այդ կապերն է՛լ ավելի բարգավաճեն և ամրապնդվեն Աստուծո օրհնության ներքո:

## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԱԼԵՔՍԱԴՐ ՆԵՎՍԿԻ ՏԱՃԱՐՈՒՄ

**Մայիսի 18, կիրակի:** Այսօր Բուլղարիայի մայրաքաղաքի ս. Ալեքսանդր Նևսկի տաճարում, **Հայոց Հայրապետի** այստեղ այցելության երջանիկ առիթով, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Նորին Սրբություն **Տ. Մաքսիմ Պատրիարքը:**

Տոնական տեսք էր ստացել հոյակապ Մայր տաճարը: Ուրախ և հանդիսավոր ղողանջում էին տաճարի զանգերը՝ ավետելով աստվածաշնչական Արարատի փեշերից և հայոց վերածնված մայր հայրենիքից բարեկամական այցով Սոֆիա ժամանած Հայոց Հայրապետի գալուստը: Մայր տաճարը և նրա շրջափակը լցված էին հայ և բուլղար հավատացյալների ծովածավալ բազմությամբ:

Հայոց Հայրապետը և Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը մոտակա Սինոդի շենքից, եկեղեցական փառաշուք թափորով, առաջնորդվեցին ս. Ալեք-

սանդր Նևսկի տաճար, մինչ տաճարի երգչախումբը հնչեցնում էր հոգևոր երգեր՝ ի պատիվ հայ և բուլղար եկեղեցիների եղբայրական համագործակցության:

Օրվա հանդիսությանը ներկա էին հայ և բուլղար բարձրաստիճան հոգևորականներ, պետական պաշտոնական անձնավորություններ, բուլղարահայ թեմական խորհրդի և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամներ և բազմաթիվ հավատացյալներ:



Սոֆիա. Հայոց Հայրապետը և Տ. Մաքսիմ Պատրիարքը ս. Ալ. Նևսկի Մայր տաճարում պատարագի ժամանակ

Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը ս. Ալեքսանդր Նևսկի Մայր տաճարում մի բովանդակալից ճառով:

Ապա Հայոց Հայրապետը առաջնորդվեց ս. խորան և հանդես եկավ պատասխան ճառով (տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 3):

Հավարտ ս. պատարագի երկու Հայրապետները հանդիսավորապես առաջնորդվեցին ս. Սինոդի շենք՝ օրհնելով Իրենց ճանապարհի վրա կանգնած հայ և բուլղար բազմահազար հավատացյալներին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 14-ին, Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը և ս. Սինոդը Սոֆիայի «Բալկան» հյուրանոցում կազմակերպեցին մեծ ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին բուլղար և հայ բարձրաստիճան հոգևորականներ, բուլղարահայ թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամներ, քահանայից դասը, «Երևան» մշակութային կոմիտեի ղեկավար ան-

դամներ, «Երևան» շաբաթաթերթի խմբագրական կազմը և այլ պաշտոնական անձինք:

Հրավիրյալների թվում էին Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրությանն առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Ստոյնո Բարըմովը, Բուլղարիայում Սովետական Միության դեսպանության երկրորդ քարտուղար **Վալենտին Լոգինովը,** բուլղար արվեստի և գիտության անվանի ներկայացուցիչներ, Սոֆիայի հոգևոր ճեմարանի դասախոսներ և այլ պաշտոնական հյուրեր՝ թվով ավելի քան հարյուր հոգի:

Պաշտոնական սույն ընդունելության ընթացքում Մաքսիմ Պատրիարքը հանդես եկավ ողջույնի և բարիգալստյան ճառով (տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 8):

Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի մինիստրությանն առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Ստոյնո Բարըմովին բովանդակալից մի ճառով (տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ

Հայոց Հայրապետի ողջույնի խոսքից հետո շնորհակալության ջերմ խոսքով հանդես եկավ Ստոյնո Բարըմովը:

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մայիսի 19-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետն** Իր շքախմբով այցելեց Սոֆիայից շուրջ 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Դրագալևցի նշանավոր վանքը:

Ավելի ուշ հայրապետական շքախմբի անդամներն այցելեցին Դրագալևցից 140 կիլոմետր հեռու գտնվող Ռիլայի պատմական վանքը, ուր ջերմորեն դիմավորվեցին վանքի վանահոր և միաբանության անդամների կողմից: Ապա այցելեցին նույն վանքի հիմնադիր Իոան Ռիլսկու գերեզման, որն ուխտատեղի է, դիտեցին վանքի սրբությունները, թանգարանները և լավագույն տպավորություններով վերադարձան մայրաքաղաք:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ԿԼԻՄԵՆՏ ՕԽՐԻՏՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ

**Մայիսի 20-ին, երեքշաբթի օրը, Հայոց Հայրապետը** և **Տ. Մաքսիմ Պատրիարքն** Իրենց շքախմբերով և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի, եկեղեցական վարչության անդամների և եկեղեցական դասի ուղեկցությամբ այցելեցին Սոֆիայի ս. Կլիմենտ Օխրիտսկու անվան հոգևոր ակադեմիա:

Ակադեմիայի շենքի շքամուտքի առաջ Հայոց Հայրապետին ծաղիկներով ու ծափերով ջերմորեն դիմավորեցին ակադեմիայի ուսանողները, դասախոսական կազմը՝ գլխավորությամբ ակադեմիայի ռեկտոր Դրագովիտիյսկու **տ. Իոան եպիսկոպոսի:**

Հայոց Հայրապետն Իր շքախմբով առաջնորդվեց ակադեմիայի մատուռ, որտեղ, մի կարճ արարողությունից հետո, Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունեց տ. Իոան եպիսկոպոսը հետևյալ ճառով.

«Ձերդ Սրբություն,

Աստուծո սիրեցյալ Հովվապետներ և հովիվներ,

Անկեղծ ուրախությամբ, մեր ամբողջ ակադեմիական ընտանիքի և իմ անունից Ձեզ և ձեր հարգարժան ուղեկիցներին ողջունում եմ՝ ասելով.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Բարով եկաք մեր հոգևոր հեմարան:

Ձերդ Սրբության՝ հայ հնադարյան եկեղեցու Գերագույն Պատրիարքի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ այսպիսի բարձր պատվիրակության այցելությունը մեզ համար մեծ պատիվ է և այն պիտի նշվի որպես հիշարժան դեպք մեր բարձրագույն աստվածաբանական դպրոցի հուշամատյանում:

Թող օրհնյալ լինի Ձեր այցելությունը և թող Տեր Աստված, հայազգի սուրբ Գրիգոր Լուսավորչի և սուրբ Կլիմենտ Օխրիտսկու՝ բուլղարական մշակույթի տոհմապետի աղոթքի բարեխոսությամբ, մեզ ոգեշնչի մեր գիտական և լուսավորչական աշխատանքներում, եկեղեցական և հասարակական ծառայության և մեր քրիստոնեական պատասխանատվության մեջ՝ պահպանելու համար աշխարհի խաղաղությունը և բարի կամքը մարդկանց միջև:

Մենք դիմավորում ենք Ձեզ ուրախությամբ, որովհետև Դուք մեզ բերում եք քրիստոնեական հավատի շնորհալի պտուղներ և հայ հնադարյան առաքելական եկեղեցու բարեպաշտությունը, որը փայլել է իր սրբությամբ մարտիրոս կույսերի՝ Հռիփսիմեի և Գայանեի, սուրբ Գրիգոր Լուսավորչի, սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Հովհան Մանդակունու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և Աստծուց ոգեշնչված այլ հայ Հայրապետների և հայ ժողովրդի հոգևոր կյանքի ծրաջան կերտիչների ու ղեկավարների կյանքով: Մենք խոնարհվում ենք նրանց հոգևոր սխրագործության առջև հանուն հավատի, ազգի և հայրենիքի:

Երբ կարդում ենք հայ ժողովրդի պատմությունը, մենք տեսնում ենք, թե Աստված ինչպիսի նախախնամությամբ է ղեկավարել նրան՝ նրա փոթորկոտ պատմական ճակատագրի ընթացքում, և հիանում ենք այդ մարտիրոս և հերոս ժողովրդի խիզախությամբ, հավատով և համբերատարությամբ: Ճիշտ է, որ հայ ժողովրդի կրոնական գիտակցությունը «Էջմիածին» անունն է տվել համահայկական այն գլխավոր սրբատեղիին, որ ս. Էջմիածինն է: Այդ օրհնյալ վայրում է իջել Աստուծո Որդին և շնորհել նրան երկրային և հոգևոր գեղեցկություն, որպեսզի այն վերածվի կրոնական և ազգային ձգողական մի կենտրոնի՝ ամբողջ աշխարհի հայության համար բոլոր դարերի ընթացքում:

Մեզ միացնում է մեր ընդհանուր քրիստոնեական հավատը, որի անկյունաքարն է հանդիսանում Հիսուս Քրիստոսն իր յոթ խորհուրդներով, որոնցով մենք՝ քրիստոնյաներս, աճում ենք և ուժեղանում լիության մեջ ու տոգորվում՝ մարդկանց փոխադարձ սիրով ծառայելու ձգտումներով:

Աղոթքների և օրհնությունների հայկական ծեսի ուղղափառ բնույթը ընդունված է դեռևս Թ դարում Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտիոսի կողմից: Ի պատասխան հայոց կաթողիկոս Զաքարիա Ա-ի մի նամակի, որի մեջ ասվում է, թե հայերը ոչ թե Հակոբ Չոնզղայի և Էֆթիհիոսի աշակերտներն են, այլ աշակերտներն են Թադեոսի և Բարթողիմեոսի և սուրբ Գրիգոր Լուսավորչի, Փոտիոս Պատրիարքը գրում է հայոց կաթողիկոսին. «...Ձերդ Սրբության նամակը ես համարում եմ ուղղափառ՝ Հիսուսի մասին հավատի, և միակարծիք՝ մեր հավատի հետ: Տեղեկացնում ենք ձեզ, որ տարակուսանքը, որը ունեինք մեր սրտերում մաղթանքների և արարողությունների վերաբերյալ, հիմնական ուսումնասիրությունից հետո վերացավ, որովհետև վերանայեցինք և գտանք, որ դուք էլ շատ տեղերում այդ երգերի մեջ փառաբանում եք Հիսուս Քրիստոսին նրա երկու բնության մեջ»:

Ավելի ուշ, 1177 թվականին, գրեթե նույն տերմիններով հայկական աստվածաբանական աղոթքների ուղղափառության մասին գրում է բյուզանդա-

կան կայսր Միքայել Կոմնենոսն իր նամակում՝ ուղղված հայոց Գրիգոր Դ կաթողիկոսին, որով նա ընդունում է հայոց դավանությունը որպես ուղղափառ:

Գովասանքի արժանի են եղել հայոց մշակույթի «արծաթյա դարի» հիմնադիր ս. Ներսես Շնորհալու ճիգերը՝ միացնելու հայ և հույն եկեղեցիները: Իր հավատի թղթի մեջ նա գրում է, որ «միևնույն Հիսուս քրիստոսն է, և՛ մարմնավոր, և՛ անմարմին», որ նա ունի «մեկ էություն և մեկ անձ՝ բնությամբ միաձուլված միակ Հիսուս Քրիստոսի մեջ, որպես անբաժանելի միություն», որ «այդ միության մեջ չի կորչում ոչինչ»:

Այսօր, ի տարբերություն անցյալի, քաղաքական և միջեկեղեցական հարաբերությունները շատ ավելի լավ են և բարենպաստ էկումենիկ կապերի ու զրույցների համար: Փոխադարձ այցելությունները ուղղափառ եկեղեցիների պետերի և Ձերդ Սրբության միջև շատ են օգնում, որպեսզի իրագործվի քրիստոնեական միության իդեալը:

Մեր երկու ժողովուրդների հարաբերությունները միշտ էլ եղել են բարեկամական՝ տոգորված փոխադարձ հասկացողությամբ, պատմական ծանր պայմաններում, որոնցում գտնվել են նրանք: Այսօր մեր ժողովուրդները միասին սոցիալիզմ են կառուցում և միասին պայքարում խաղաղության, արդարության, ապահովության և համագործակցության համար աշխարհի մեջ: Հայ և բուլղար եկեղեցիներն իրենց պետերի գլխավորությամբ ակտիվորեն են մասնակցում այդ պայքարին և գիտակցորեն բերում իրենց քրիստոնեական նպաստը:

Շնորհակալություն հայտնելով Ձերդ Սրբությանը՝ հայրական ուշադրության համար, որը ցուցաբերեցիք Ձեր այս այցելությամբ, խնդրում ենք Ձեր աղոթքը մեր պրոֆեսորների, ուսանողների և իմ խոնարհ անձի համար, որպեսզի նվիրվածությամբ շարունակենք ծառայել հարուցյալ Տիրոջը և մեր հայրենի եկեղեցուն, զարգացնենք աստվածաբանությունը հօգուտ մեզ բոլորիս և ձգտենք «հավատի միության և հաղորդակցության՝ սուրբ Հոգու հետ»:

Ձերդ Սրբությանը ցանկանում եմ քաջառողջություն, որպեսզի է՛լ ավելի փառավորեք սուրբ Գրիգոր Լուսավորչի գահը, և Ձեր իմաստուն ղեկավարությամբ առաքելական մեծ եկեղեցին բարձրանա ի փառս Աստուծո և ի բարօրություն ամբողջ հայ ժողովրդի երկա՜ր, երկա՜ր տարիների համար»:

Ի պատասխան հոգևոր ակադեմիայի ռեկտորի սույն բովանդակալից ճառի, ակադեմիայի դասախոսական կազմին և ուսանողությանն ուղղված ողջույնի ու օրհնության խոսքով հանդես եկավ Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նախ Իր խորազգաց շնորհակալությունը հայտնեց այն հրավերի համար, որով թանկագին մի պատեհություն էր ընձայվում Իրեն՝ ներկա գտնվելու աստվածաբանական սույն կրթական հաստատության մեջ՝ շրջապատված դասախոսներով և ուսանողներով, ինչպես նաև ակադեմիայի ռեկտորի կողմից արտասանված գնահատանքի այն ջերմ խոսքերի համար, որոնք ուղղվել էին Հայաստանյայց եկեղեցուն և հայ ժողովրդին:

Այնուհետև Հայոց Հայրապետը, անդրադառնալով եկեղեցիների միության հարցին, հույս հայտնեց, որ, Աստուծո օգնականությամբ, եկեղեցիների միության ճանապարհին գոյություն ունեցող բազում և բազմապիսի հարցեր ժամանակի ընթացքում աստիճանաբար կպարզաբանվեն, կլուծվեն, և կիրականանա քրիստոնեական տիեզերական եղբայրությունը՝ յուրաքանչյուր եկեղեցի պահպանելով իր ինքնագլխությունը և ինքնավար ղեկավարությունը:

Իր խոսքի մեջ Հայոց Հայրապետն առանձին կարևորությամբ կանգ

առավ քրիստոնեական եկեղեցիների, քրիստոնեական հավատի ապագայի հարցի վրա՝ նշելով, որ քրիստոնեությունը հավիտենական ճշմարտությունների վարդապետություն է, և որ այդ հավիտենական ճշմարտությունները անխզելիորեն կապված են ժամանակակից աշխարհի կյանքի և պատմության հետ: Հետևաբար, եկեղեցիների առաջ այսօր դրված է մի մեծ և կարևոր հարց՝ Ավետարանի ճշմարտությունները արժեքավորելու, մեր օրերի պայմանների մեջ այդ ճշմարտություններին կյանք տալու հարցը, որով աստվածաբանության ամեն մի երիտասարդ ուսանող պարտավոր է մտահոգվել և աշխատել լուծում գտնել դրան: «Բավական չէ աշխարհին ներկայանալ միայն անցյալի արժեքներով,—եզրափակեց Իր խոսքը Հայոց Հայրապետը,—այլ պետք է այսօրվա աշխարհին մեր խոսքն ասել: Այդպիսով միայն քրիստոնեական հավատքը միշտ կենդանի կմնա պատմության և ժողովուրդների կյանքի մեջ»:

Վերջում Հայոց Հայրապետն օրհնեց ակադեմիայի երիտասարդ ուսանողներին՝ հայցելով Աստուծո օգնականությունը՝ նրանց հավատի զորացման և նրանց աշխատանքների հաջողության համար:

Հայոց Հայրապետը, ի հիշատակ Իր այցելության, ս. Էջմիածնից բերված խաչիկներ բաժանեց ուսանողներին, իսկ հոգևոր ակադեմիային նվիրեց ԺԲ դարի հայկական մի մանրանկարի ընդօրինակություն՝ գեղեցիկ շրջանակի մեջ առնված:

Այնուհետև Հայոց Հայրապետն ուսուցչանոցում ծանոթացավ և ջերմ զրույց ունեցավ դասախոսական կազմի հետ, հետաքրքրվեց հոգևոր ակադեմիայի առօրյայով, ուսումնական ծրագրով, ուսանողության թվով: Հայոց Հայրապետն Իր այցելության ավարտին Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության ողջույնը հաղորդելով բոլոր ներկաներին՝ հրաժեշտ տվեց հոգևոր ակադեմիային:

## ԱՅՑ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Մայիսի 20-ին, երեքշաբթի օրը,** ժամը 16.30-ին, **Հայոց Հայրապետը** և **Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը**, Իրենց շքախմբի անդամներով, քաղաքավարական այցելություն տվեցին Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության պետական խորհրդին, ուր ջերմորեն ընդունվեցին խորհրդի անդամ գեներալ **Իվան Միխայլովի** կողմից:

Քույր եկեղեցիների երկու Հովվապետների և պետական խորհրդի հարգարժան անդամ գեներալ Իվան Միխայլովի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին մասնակցեց արտաքին գործերի մինիստրության առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ **Ստոյնո Բարըմովը**:

Նույն օրը, երեկոյան, տրվեց սույն պաշտոնական այցելության հեռուստատեսային հաղորդումը:

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

**Մայիսի 20-ին,** երեկոյան ժամը 20-ին, «Բալկան» հյուրանոցի շքեղ դահլիճում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվեց համայնքային ճաշկերույթ:

Սույն ճաշկերույթին ներկա էր նաև Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատ-

րիարքը՝ շրջապատված սինոդական միտրոպոլիտներով, եպիսկոպոսներով և բուլղար եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով։

Հայոց Հայրապետի պատվին կազմակերպված սույն ընդունելությանը բուլղարահայ համայնքի կողմից հրավիրվել էին նաև Բուլղարիայում խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահ **Ա. Կոշկինը,** Բուլղարիայում Սովետական Միության հյուպատոս **Ա. Ելիսեևը,** եկեղեցական գործերի խորհրդի նախագահ **Ստոյնո Բարըմովը,** ինչպես նաև այլ պաշտոնական անձինք։



Սոֆիա. Ընդունելություն Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի մոտ

Ճաշկերույթին ներկա էին նաև բուլղարահայ թեմական խորհրդի և եկեղեցական վարչությանց անդամներն իրենց հարգելի տիկիններով, քահանայից դասը, «Երևան» շաբաթաթերթի խմբագրական կազմը, «Երևան» մշամութային կազմակերպության ղեկավար անդամներ, հասարակական գործիչներ, արվեստագետներ և այլ հյուրեր՝ ավելի քան 120 հոգի։

Պատվո սեղանի շուրջ տեղ գրավեցին երկու Հովվապետները, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ և պաշտոնական այլ անձինք։

Սեղանն օրհնեց Հայոց Հայրապետը։ Այնուհետև հայրենասիրական խանդավառ մթնոլորտում արտասանվեցին բաժակաճառեր։

Բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ **Օնիկ Ասլանյանը,** հանուն բուլղարահայ համայնքի և թեմական խորհրդի, ջերմորեն ողջունեց Վեհափառ Հայրապետի և պետական անձնավորությունների ներկայությունը՝ նշելով.

«Թույլ տվեք բուլղարահայ եկեղեցվո թեմական խորհուրդի անունով խորին շնորհակալություն և երախտագիտություն հայտնել Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին և բուլղար օրթոդոքս եկեղեցվո սրբազան Սինո-

դին՝ իրենց հրավերին համար, որով հնարավորություն կտրվի անգամ մը ևս վայելել Նորին Վեհափառություն Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայությունը մեր արևաշող և սքանչելի երկրին՝ Բուլղարիո մեջ:

Քույր եկեղեցվո ներկա հրավերը արտահայտությունն է ոչ միայն երկու եկեղեցիներու, այլ և բուլղար և հայ ժողովուրդներու միջև գոյություն ունեցող եղբայրական հարաբերություններուն, ժողովուրդներ, որոնք դարեր շարունակ տառապած են օսմանյան լուծին տակ ու իրենց ազատությունը ստացած են հերոսական ռուս ժողովուրդի զավակներեն:

Փոքր Հայաստանը սովետական ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ, պատմական կարճ ժամանակի ընթացքին, վերածվեցավ ծաղկած երկրի՝ կյանքի բոլոր բնագավառներուն մեջ, իրագործելով հսկա նվաճումներ:

Բուլղարիո Ժողովրդական Հանրապետությունը ևս սույն երեսուն տարիներու ընթացքին, շնորհիվ Սովետական Միության եղբայրական անշահախնդիր բարեկամության ու օժանդակության, հսկա հաջողություններ և վերելք ձեռք բերավ:

Հարկավոր է ընդգծել, թե ներկայիս աշխարհի մեջ տիրող համընդհանուր խաղաղ զարգացումը հնարավոր դարձավ շնորհիվ Սովետական մեծ Միության վարած խաղաղասիրական և ժողովուրդներու միջև փոխադարձ հասկացողության քաղաքականության:

Հայ և բուլղար քույր եկեղեցիները, Նորին Սրբություն Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի և Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքի գլխավորությամբ, անվերապահ աջակցություն կընծայեն խաղաղության այս պայքարին:

Արդար է ընդգծել, թե ժողովուրդներու սույն երեսնամյա խաղաղ գոյակցությունը և զարգացումը տեղի ունեցավ և տեղի կունենա շնորհիվ սովետական հերոս ժողովուրդի այն միլիոնավոր զոհերուն, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին հանուն հաղթանակի՝ ջախջախելով ֆաշիզմը:

Փա՜ռք այդ հերոսներուն:

Ձերդ Վեհափառություն,

Հպարտ ենք, որ Դուք, որպես բուլղարահայ թեմի նախկին առաջնորդ, Ձեր իմաստուն ղեկավարությամբ կարողացաք փառավոր էջեր բանալ ոչ միայն հայ եկեղեցվո, այլ և հայ ժողովուրդի ներկա պատմության մեջ:

Ձեր գործունեությունը դրական արդյունքներ տված կյանքի բոլոր ասպարեզներուն մեջ, ինչպես կրոնական, միջեկեղեցական, այնպես ալ շինարարական, մշակութային և մանավանդ հայրենասիրական բնագավառներուն մեջ: Դուք կարողացաք սփյուռքի մեջ ցրված հայությունը համախմբել Մայր Աթոռի և Սովետական Հայաստանի շուրջ:

Թույլ տվեք, հանուն բուլղարահայ թեմական խորհուրդին, եկեղեցական վարչություններուն և բոլոր հավատացյալներուն, անգամ մը ևս որդիական հարգանքներով բարի գալուստ մաղթել Ձեզ:

Կմաղթենք Ձերդ Վեհափառության, ինչպես և Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին արևշատություն և քաջառողջություն՝ շարունակելու Ձեր իմաստուն ղեկավարությունը հայ և բուլղար եկեղեցիներու հետագա գործակցության ամրապնդման ու Ձեր օժանդակությունը՝ ժողովուրդներու բարեկամության և աշխարհի խաղաղության համար:

Բաժակ կբարձրացնեմ հանուն Ձեր Սրբություններու արևշատության:

Հանուն մեր թանկագին հայրենիքին՝ Բուլղարիո և սովետական ժողո-

վուրդներու եղբայրական ընտանիքին մեջ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետագա հաջողություններուն:

Կեցցե՛ բուլղարա-սովետական բարեկամությունը»:

Ընդունելության ժամանակ ջերմ և հուզիչ բաժակաճառեր արտասանեցին նաև տ. **Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը,** պրն. **Ստոյնո Բարբովը** և պրն. **Գաբրիել Գաբրիելովը:**

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք առավ նաև Նորին Սրբություն **Մաքսիմ Սրբազան Պատրիարքը:**

Իր պատվին կազմակերպված այս պաշտոնական ընդունելությանը, խոսք առնելով, Հայոց Հայրապետն արտասանեց բովանդակալից մի ճառ, որի ավարտին մի անգամ ևս Իր եղբայրական շնորհակալությունը հայտնեց Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքին՝ Նրա եղբայրական սիրալիր հրավերի համար, Բուլղարիայի բարեկամ կառավարությանը՝ Բուլղարիա Իր այցելության առթիվ ընձեռված դյուրությունների և ուշադրության համար, ինչպես նաև ողջ բուլղարաժողովրդին՝ Իր և ս. Էջմիածնի հանդեպ ցույց տրված բացառիկ սիրո և նվիրման համար:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՌՆԱՅՈՒՄ

**Մայիսի 21-ին, չորեքշաբթի օրը,** Հայոց Հայրապետն Իր շքախմբի, թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամների ուղեկցությամբ երկօրյա այցելության մեկնեց Վառնա:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին, Մաքսիմ Պատրիարքի անունից, **տ. Իոան եպիսկոպոսը** և բուլղար պատրիարքարանի պաշտոնյա **Տանչուկ Մատեևի քահանան:**

Սոֆիայի օդանավակայանում Հայոց Հայրապետին դեպի Վառնա ճանապարհեց Տ. Մաքսիմ Պատրիարքը՝ շրջապատված սինոդական միտրոպոլիտներով:

Վառնայի օդանավակայանում Հայոց Հայրապետին և Նրան ուղեկցող անձանց դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Վառնայի միտրոպոլիտ **տ. Իոսիֆը՝** շրջապատված բուլղար հոգևորականներով և պաշտոնական անձնավորություններով:

Հայոց Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին նաև Վառնայի հայոց եկեղեցու **տ. Ղևոնդ քհն. Բոյաջյանը,** Բուրկասի եկեղեցու **տ. Գարեգին քհն. Դուզգարյանը** և Ռուսեի եկեղեցու **տ. Խաչատուր քահանան,** ինչպես նաև Վառնայի եկեղեցական վարչության ատենապետ **Նուբար Յաղմուրյանը** և վարչության այլ անդամներ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին նաև Սովետական Միության փոխ-հյուպատոս **Վ. Ն. Պարշինը** և քաղաքային սովետի նախագահի տեղակալ **Սոմովը:**

**Մայիսի 22-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետն** այցելեց Վառնայի հայոց ս. Սարգիս եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով: Այնուհետև տ. Ղևոնդ քհն. Բոյաջյանը բարիգալստյան ջերմ խոսքով ողջունեց Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը:

Նորին Սրբությունն Իր պատասխան խոսքի մեջ ողջույն և օրհնություն հաղորդեց ս. Էջմիածնից և խանդավառեց հյուրընկալ այս հողի վրա ապրող Իր հավատացյալ զավակներին:

Վառնայում գտնվելու օրերին Վեհափառ Հայրապետն Իր շքախմբով այցելեց քաղաքի և նրա շրջակայքի պատմական ու տեսարժան վայրերը:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԼՈՎԴԻՎՈՒՄ

**Մայիսի 23-ին, ուրբաթ օրը, Հայոց Հայրապետն** Իր շքախմբով հովվապետական այցելության մեկնեց Պլովդիվ։ Պլովդիվը Բուլղարիայի արդյունաբերական երկրորդ մեծ քաղաքն է, ուր դարեր առաջ հաստատվել է նաև հայկական մի գաղութ։

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Պլովդիվի միտրոպոլիտ և ս. Սինոդի անդամ **տ. Վառլաամը,** ինչպես նաև միտրոպոլիտներ **տ. Սաֆրոնովը, տ. Բանկարտին, տ. Նիկոլայը** և բուլղար այլ բարձրաստիճան հոգևորականներ։

Օդանավակայանում Հայոց Հայրապետին խանդավառորեն և ջերմ սիրով դիմավորեցին նաև Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու եկեղեցական վարչության անդամները՝ ատենապետ **Սարգիս Ալթունյանի** գլխավորությամբ, ինչպես նաև **տ. Հուսիկ Տողանյանը** և **տ. Սահակ Մեսրոպյան** քահանա հայրերը, տեղի «Երևան» մշակութային կոմիտեի նախագահ **Կարո Քափույյանը** և հայ ու բուլղար հավատացյալների մի մեծ բազմություն։

Հայոց Հայրապետին այստեղ նույնպես ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Պլովդիվի սովետական հյուպատոս **Բորիս Արխիպովը** և քաղաքային սովետի նախագահ հայազգի **Ա. Բարիքյանը։**

Օդանավակայանից Հայոց Հայրապետը հանդիսավորությամբ առաջնորդվեց «Տրիմոնցիում» հյուրանոց, ուր մասնավոր մի հարկաբաժին էր հատկացված Նրան։

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ՊԼՈՎԴԻՎԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ Ս. ՄԱՐԻՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Մայիսի 23-ին, ուրբաթ օրը,** տեղի ս. Մարինա եկեղեցում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տեղի ունեցավ էկումենիկ աղոթք և հանդիսություն։

Հայոց Հայրապետի՝ Պլովդիվում գտնվելու կապակցությամբ նախապես այստեղ էր ժամանել Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը։

Երկու Հայրապետները հավատացյալների խանդավառ ցույցերի ներքո, երգով ու շարականով, առաջնորդվեցին եկեղեցի, ուր միտրոպոլիտ տ. Վառլաամը բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին։

Իր պատասխան խոսքի մեջ Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ դիմավորության համար և օրհնեց բոլոր ներկաներին։

Եկեղեցական արարողությունից հետո բուլղար միտրոպոլիտարանում, ի պատիվ Հայոց Հայրապետի և Տ. Մաքսիմ Պատրիարքի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, ուր փոխանակվեցին բարիգալստյան և ողջույնի ճառեր։

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԲԱՉԿՈՎԱՅԻ ՎԱՆՔ

**Մայիսի 24-ին,** շաբաթ օրը, **Հայոց Հայրապետը, Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքի** հետ, շքախմբի անդամներով, ուխտի մեկնեց բուլղարական պատմական Բաչկովայի վանք, ուր թաղված է Հայոց Հայրապետի և հայ ժողովրդի մեծ բարեկամ լուսահոգի **Տ. Կիրիլ Պատրիարքը** բուլղարական եկեղեցու։

Վանքի մեծ դարբասի առաջ վանահայր **տ. Իլարիոն եպիսկոպոսը** ջերմորեն դիմավորեց երկու քույր եկեղեցիների Հովվապետներին և Նրանց շքախմբի անդամներին։ Երկու Հայրապետները եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով առաջնորդվեցին վանքի պատմական տաճար։



«ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆ»-Ի ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՄՈՏ. ՊԼՈՎԴԻՎ

Այսօր բուլղար եկեղեցու եկեղեցական-ազգային մեծ տոներից մեկն է։ Տոնն է բուլղար եկեղեցու մեծ լուսավորիչների՝ **ս. Կիրիլի** և **ս. Մեթոդիոսի,** որոնք գիր ու դպրություն տվեցին բուլղարներին և հանդիսացան բուլղարական մշակույթի և գրականության երախտաշատ հիմնադիրները։

Այսօր նաև Բաչկովայի վանքի ուխտավորության օրն է։ Բազում բուլղար և հայ ուխտավորներ Պլովդիվից և այլ շրջաններից երկյուղած բարեպաշտությամբ, ուխտի էին եկել Բաչկովայի վանք։



Բաչկովայի պատմական վանքը

Տաճարում տ. Իլարիոն միտրոպոլիտը բարիգալստյան հուզիչ ճառով ողջունեց Հայոց Հայրապետին։ Ի պատասխան միտրոպոլիտի ճառի Հայոց Հայրապետը, մասնավորաբար ոգեկոչելով պայծառ հիշատակը երջանկահիշատակ Տ. Կիրիլ Պատրիարքի, որը եղավ մեր ժամանակի բուլղար լուսամիտ վարդապետներից մեկը, հայրենասեր հոգևորական, սքանչելի հոգու տեր շնորհալի գիտնական, առաքինի և հավատավոր քրիստոնյա։ Հայոց Հայրապետը հուզումով վեր հանեց Տ. Կիրիլ Պատրիարքի կատարած արդյունաշատ դերը էկումենիկ շարժման և աշխարհի խաղաղության պաշտպանության նվիրական գործում՝ Իր հետ միասին, որպես մտերիմ և գաղափարակից հոգևորականներ։ Հայոց Հայրապետը Տ. Կիրիլ Պատրիարքին բնութագրեց որպես մեր օրերում օրթոդոքս եկեղեցու պարծանքներից և ուղղափառ հավատի սյուներից մեկն ու միաժամանակ հայ ժողովրդի և հայ եկեղեցու ճշմարիտ ու անշահախնդիր բարեկամը։

Եկեղեցական հանդեսության ավարտից հետո Հայոց Հայրապետի և Տ. Մաքսիմ Պատրիարքի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Տ. Կիրիլ Պատրիարքի շիրմի վրա՝ նախ հայերեն, ապա բուլղարերեն լեզուներով։

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ՊԼՈՎԴԻՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Մայիսի 25-ին, կիրակի օրը,** Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց **Հայոց Հայրապետը** և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց Իր հոգևոր զավակներին։



Պլովդիվ. Հայոց Հայրապետը ս, Գևորգ եկեղեցում պատարագի ժամանակ

Առավոտյան ժամը 10-ին սկսվեց ս. պատարագի արարողությունը: Եկեղեցու աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել Տ. Մաքսիմ Պատրիարքի ներկայացուցիչներ՝ սինոդական միտրոպոլիտներ, արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, ինչպես նաև Պլովդիվի տարբեր դավանությանց եկեղեցիների հոգևորականներ և պաշտոնական այլ անձինք:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը ս. Գևորգ եկեղեցում, օրվա հանդիսության առիթով, արտասանեց քարոզ հետևյալ բնաբանով. «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետը, ի նշան Իր հայրական սիրո և գնահատանքին դեպի Պլովդիվի հայոց եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը, թեմակալ առաջնորդ սրբազանին հանձնեց ս. Էջմիածնից բերված քանդակված մի խաչքար՝ ցանկություն հայտնելով, որ այն զետեղվի հարմար մի տեղ պատմական ս. Գևորգ եկեղեցում:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՎԻՆ

**Մայիսի 25-ին, կիրակի օրը,** ժամը 12-ին, Պլովդիվի հայ եկեղեցական վարչությունը հրաժեշտի պաշտոնական ընդունելություն կազմակերպեց «Տրիմոնցիում» հյուրանոցի դահլիճում: Ընդունելությանը մասնակցեց նաև Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը՝ շրջապատված բուլղար օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով:

Սույն ընդունելությանը ներկա էին նաև պետական անձնավորություններ՝ իրենց կանանցով, ինչպես նաև Պլովդիվի քաղաքային սովետի նախագահ տիար Ա. Բարիքյանը՝ իր տիկնոջ հետ:

Բուլղարահայ համայնքի կողմից հրաժեշտի սույն ընդունելությանը մասնակցեցին թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների ատենապետներ, քահանայից դասը, մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ իրենց կանանցով:

Հայոց Հայրապետի պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ Նորին Սրբությանը ողջունեցին ընդունելության կազմակերպիչ հանձնաժողովի նախագահ Սարգիս Ալթունյանը, «Երևան» մշակութային կոմիտեի Պլովդիվի մասնաճյուղի նախագահ Գ. Քափուլյանը:

Ընդունելության ժամանակ, հանուն բուլղար օրթոդոքս եկեղեցու, խոսք առավ նաև Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը:

Սույն ընդունելությունը եզրափակեց Հայոց Հայրապետը ներկաներին ուղղված հրաժեշտի ջերմ և սրտառուչ խոսքով:

Հրաժեշտի սույն ընդունելության խանդավառությունը ավելացրեց Պլովդիվի հայոց եկեղեցու երգչախումբը՝ Սարգիս Պալթայանի ղեկավարությամբ կատարելով հայերեն և բուլղարերեն հոգևոր և ժողովրդական երգեր:

## ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, երկու Հովվապետները, Իրենց շքախմբի անդամներով, ծաղկեպսակ զետեղեցին Բուլղարիայի ազատագրության համար զոհված սովետական մարտիկների հուշարձանին:

Սույն հանդիսությանը մասնակցեցին պաշտոնական անձնավորություններ, ինչպես նաև Պլովդիվի քաղաքային սովետի նախագահ Ա. Բարիքյանը:

Այնուհետև երկու Հայրապետները այցելեցին «Եղբայրական գերեզման», ուր թաղված էին 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զոհված ռուս և բուլղար մարտիկները:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, Պլովդիվի քաղաքային սովետը, նախագահ Ա. Բարիքյանի գլխավորությամբ, քաղաքապետարանում կազմակերպեց պաշտոնական ընդունելություն, որն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

Ընդունելության ընթացքում Հայոց Հայրապետը, Տ. Մաքսիմ Պատրիարքը, ինչպես և քաղաքային սովետի հարգելի նախագահը բարիգալստյան և ողջույնի ճառեր փոխանակեցին:

Քաղաքային սովետի մեծարգո նախագահը երկու Հայրապետներին և նրանց շքախմբի անդամներին խոսեց Պլովդիվ քաղաքի բարեզարդման հետագա ծրագրերի և խոստումնալից հեռանկարների մասին:

**Մայիսի 26-ին, երկուշաբթի օրը,** Հայոց Հայրապետը և Տ. Մաքսիմ Պատրիարքը Պլովդիվից վերադարձան Սոֆիա:

Երկու Հայրապետներին հանդիսավորությամբ ճանապարհեցին Պլովդիվի հայ և բուլղար եկեղեցական իշխանությունները, պաշտոնական անձնավորություններ և հայ ու բուլղար հավատացյալների մի մեծ բազմություն:

## ԱՅՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

**Մայիսի 27-ին, երեքշաբթի օրը,** առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետն այցելեց Սոֆիայում սովետական Միության դեսպան Վլադիմիր Բազովսկուն:

Սույն այցելության ժամանակ Հայոց Հայրապետին ընկերակցում էին տ. Ներսէս եպիսկոպոս Ծաքարյանը և բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օնիկ Ասլանյանը:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պարոն դեսպանի միջև տեղի ունեցավ ջերմ և սիրալիր զրույց:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, երկու Հայրապետները Իրենց շքախմբերով մեկնեցին Վիտոշի փեշերին գտնվող Դրագալևցի վանք, որը Հայոց Հայրապետի և Տ. Մաքսիմ Պատրիարքի միջև տեղի ունեցավ հատուկ հանդիպում և զրույց բուլղար ու հայ եկեղեցիների հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման մասին էկումենիկ ոգով:

Այս առթիվ Հայոց Հայրապետը և Տ. Մաքսիմ Պատրիարքը խմբագրեցին և ստորագրեցին պաշտոնական հաղորդագրություն բուլղարերեն և հայերեն լեզուներով (տե՛ս էջ 10):

Սույն հաղորդագրությունը հանդիսանում է պատմական կարևոր մի փաստաթուղթ երկու քույր եկեղեցիների ապագա գործունեության ճանապարհի վրա:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻՆ

Վերոհիշյալ պաշտոնական հաղորդագրության ստորագրումից հետո երկու Հովվապետները վերադարձան Սոֆիա:

Ժամը 20-ին սրբազան Սինոդի պալատում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվեց հրաժեշտի վերջին ընդունելությունը: Այստեղ մի անգամ ևս փոխանակվեցին ողջերթի և մնասբարովի սրտագին ճառեր՝ եղբայրական սիրալիր զգացմունքներով տոգորված, որոնք պատմական պիտի մնան հայ և բուլղար եկեղեցիների ու ժողովուրդների մեր օրերի տարեգրության էջերում:

Ընդունելության ավարտին փոխանակվեցին հուշանվերներ երկու Հայրապետների և Նրանց շքախմբի անդամների միջև:

**Մայիսի 28-ին, չորեքշաբթի օրը,** Հայոց Հայրապետը լավագույն և անմոռանալի տպավորություններով հրաժեշտ տվեց Բուլղարիային, Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին, բուլղար եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին և բուլղարահայ թեմին:

Սոֆիայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեց Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը՝ շրջապատված բուլղար բարձրաստիճան հոգևորականներով:

Այստեղ Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև պետական պաշտոնական անձնավորություններ, բուլղարահայ թեմի եկեղեցական, մշակութային, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և հայ ու բուլղար հավատացյալների մի հոծ բազմություն:

Հուզիչ էր մեկնումի պահը, երբ ջերմորեն ողջագուրվեցին երկու Հովվապետները և Նրանց շքախմբի անդամները քրիստոնեական եղբայրության սիրո համբույրով: Սիրո այդ համբույրի մեջ մի անգամ ևս ներհրագործվեց այս երկու եկեղեցիների և ժողովուրդների բարեկամության դարավոր կապը:

Բուլղարիայում Հայոց Հայրապետի գտնվելու օրերին երկու Հովվապետների միջև կատարված սրտագին ողջագուրումները, տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունները, միջեկեղեցական զրույցները, հավատացյալների խանդավառությունը, ուխտագնացությունները դեպի պատմական վանքերն ու թեմերը, հանդիսությունների առիթով փոխանակված անկեղծ խոսքերն ու արտահայտությունները պայծառ և հուզիչ ապացույցները եղան քրիստոնեական եղբայրության այս նոր և բարձր արտահայտության:

Բուլղարահայ թեմը և համայնքը ևս պատմական ու անմոռանալի օրեր ապրեց Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով: Այս այցելությամբ Է՛լ ավելի խորացավ բուլղարահայ թեմի և համայնքի սերն ու հավատարմությունը դեպի մեր հավատքի կենտրոն և լույսի խորան Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու նրա արժանավոր Գահակալը, և հայրենականարոտ սրտերն Է՛լ ավելի ջերմացան վերածնված Հայոց աշխարհի արևով և ապագայի պայծառ հեռանկարներով:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

**Մայիսի 28-ին, շաբաթ օրը,** Հայոց Հայրապետը վերադարձավ Մոսկվա՝ ընկերակցությամբ տ. Նարեկ եպիսկոպոսի և տ. Վարդան աբեղայի:

Շերեմետևոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի

վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Գրիգորիս, տ. Տիրան, տ. Մասիս, տ. Անանիա և տ. Եզնիկ աբեղաները:

Հանուն ռուսաց պատրիարքարանի և Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, Հայոց Հայրապետի ժամանումը դիմավորեցին ռուս պրավոսլավ եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ միտրոպոլիտ տ. Յուվենալին և այլ հոգևորականներ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի լիազորության արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի օգնական Իվան Ի. Միխինը:

Հայոց Հայրապետը Մոսկվայում իջևանեց «Սովետսկայա» հյուրանոցում, որտեղ մնաց մինչև հունիսի 5-ը՝ Լոնդոն հովվական այցելության մեկնելու օրը:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՍԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

**Մայիսի 29-ին, հինգշաբթի օրը,** երեկոյան, Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը և ռուս պրավոսլավ եկեղեցու ս. Սինոդը, ի պատիվ Հայոց Հայրապետի, Մոսկվայի պատրիարքարանում կազմակերպեցին մեծ ընդունելություն:

Ընդունելությանը ներկա էին ռուս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Մոսկվայի պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի ղեկավար աշխատողներ և այլ պաշտոնական անձինք:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ընկերակցում էին տ. Արսեն և տ. Ներսես եպիսկոպոսները:

Ընդունելությանը հրավիրված էին նաև Անտիոքի և Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցիների Մոսկվայի ներկայացուցիչները:

Պաշտոնական սույն ընդունելության ընթացքում, որն անցավ եղբայրական բացառիկ ջերմ ու սիրալիր մթնոլորտում, Հայոց Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը, ինչպես նաև ներկաներից շատերը փոխանակեցին ողջույնի և բարիգալստյան ճառեր:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Հունիսի 1-ին, կիրակի օրը,** առավոտյան ժամը 11-ին, Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցույմ հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը: Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Մոսկվայի հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ ու հավատացյալների մի հոծ բազմություն:

Սուրբ սեղանին սպասարկում էին տ. Արսեն եպիսկոպոսը և տ. Գրիգորիս, տ. Տիրան, տ. Մասիս, տ. Եզնիկ, տ. Անանիա աբեղաները:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ բերելով ողջույն և օրհնություն Մայր Աթոռ ս. Էջմիածնից: Իր քարոզի մեջ Հայոց Հայրապետն այնուհետև ներկաներին տեղեկություններ հաղորդեց Ռումինիա և Բուլղարիա

կատարած Իր ուղևորության, ինչպես նաև ռումինահայ և բուլղարահայ համայնքների ազգային-եկեղեցական կյանքի ու գործունեության մասին՝ խանդավառելով և ջերմացնելով Իր հավատացյալ զավակների հոգիները:

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Մոսկվայում գտնվելու օրերին Հայոց Հայրապետը պաշտոնական հրավեր էր ստացել ներկա լինելու ռուսաց Տ. Պիմեն Պատրիարքի գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ կազմակերպված հանդիսությանը:

**Հունիսի 3-ին, երեքշաբթի օրը**, առավոտյան, Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ տ. Արսեն եպիսկոպոսի և տ. Եզնիկ, տ. Անանիա աբեղաների, ժամանեց Մոսկվայի Ավետման Մայր տաճար, ուր օրվա հանդիսության առթիվ մատուցվելու էր ս. պատարագ: Տաճարի շքամուտքի առաջ Հայոց Հայրապետի գալուստը դիմավորեցին ռուս պրավոսլավ եկեղեցու ներքին թեմերի բոլոր թեմակալ առաջնորդները՝ գլխավորությամբ Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկոդիմի: Հայոց Հայրապետն Իր շքախմբի անդամներով առաջնորդվեց Մայր տաճար, ուր Նրան հատկացված էր մասնավոր աթոռ: Այնուհետև ռուս եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, զգեստավորված, եկեղեցական թափորով, մուտք գործեց տաճար՝ մատուցելու հանդիսավոր ս. պատարագ:

Ուրախ և տոնական դողանջում էին վեհաշուք տաճարի զանգերը: Տաճարն ու նրա շրջափակը լցված էին հավատացյալ ժողովրդի մեծ բազմությամբ:

Պատարագի ավարտին քարոզեց Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկոդիմը, որն իր քարոզի վերջում ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը Մայր տաճարում:

Այնուհետև բեմ հրավիրվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որը, Հայաստանյայց եկեղեցու, համայն հայ հավատացյալ ժողովրդի և անձամբ Իր անունից ջերմորեն շնորհավորելով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի գահակալության չորրորդ տարեդարձը, վեր հանեց ռուս պրավոսլավ եկեղեցու պետի եկեղեցանվեր ու մարդասիրական գործունեությունը՝ բարձր գնահատելով եկեղեցիների միության, խաղաղության պաշտպանության և ժողովուրդների եղբայրության ու համագործակցության ի նպաստ Նրա գործադրած ջանքերը: Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետը սրտագին բարեմաղթություններ արեց Նորին Սրբության կյանքի արևշատության, ռուս քույր եկեղեցու բարգավաճման, պայծառության ու անսասանության համար:

Սուրբ պատարագից հետո, ժամը 15-ին, Մոսկվայի ռուսաց պատրիարքարանում տրվեց պաշտոնական ընդունելություն, որին հրավիրված էր Հայոց Հայրապետը:

Ընդունելությանը ներկա էին ռուս եկեղեցու ողջ նվիրապետությունը, ինչպես նաև Մոսկվայում Անտիոքի և Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչ հոգևորականներ ու այլ պաշտոնական անձինք:

Ընդունելության ընթացքում, որն անցավ խանդավառ ու սրտագին մթնոլորտում, փոխանակվեցին ջերմ ճառեր ու հուշանվերներ:

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԼՈՆԴՈՆ

**Հունիսի 5-ին, հինգշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը Մոսկվայից մեկնեց Լոնդոն։

Շերեմետևոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին Մոսկվայում գտնվող հայ հոգևորականները՝ գլխավորությամբ տ. Արսեն եպիսկոպոսի։

Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև ռուս եկեղեցու ներկայացուցիչ տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսը, Մոսկվայում Անտիոքի և Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչ հոգևորականներ և այլ պաշտոնական անձինք։

